ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ

ԱՄՍԱԿԳԻՐ

№ 12

1879 թ. ՅՈՒՆԻՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

1879

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես.

I. «Մանկավարժական Թերթի» Առաջին Տարեջանը 1

II. Կիլիկեան Ընկերութիւն, նորա յայտարարութիւնը և Հիմնական կանոնագիրը 6

III. Բառագիրք Դաղղլերէն, Հայերէն և Տաճկերէն լեզուաց ՆՈՐԱՑԻՒ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՑԻՈՑ . . . 16

IV. «ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ» Հայաստանի Ճանբորդ Գ. Վ. Սրուանձտեանցի 25

V. Տեղեկագիր և Առաջարկութիւնք Տեսչին Ազգային Մեսրոպեան և Հռիփսիմեան Վարժարանաց Զմիւռնիոյ 51

VI. ԱՑԼ և ԱՑԼՔ 62

VII. Յայտարարութիւններ 66

VIII. Կարճ պատասխան 66

թեամբ. առաջինը թէ արդեօք մի այդպիսի մանագիտական ամսագիր կարող է մեզանում գոյութիւն ունենալ նիւթի բովանդակութեան կողմից, քանի որ մեր մէջ չեն երևում աշխատողներ, գրողներ այդ ամսագրի ծրագրի համաձայն, ուրեմն՝ եզրափակում էին դոքա, որ այդ թերթը եթէ հրատարակուի էլ, իւր ծրագրի խոստման համեմատ չի լինի: Երկրորդ՝ թէ արդեօք երկար կըտևէ այդ ամսագրի գոյութիւնը, երբ մեր մէջ գեռ լրագիրներն անգամ չեն կարողանում իւրեանց ծախքերը դուրս գալ, ուր թէ մի մասնագիտական ամսաթերթ, որի բաժանորդաց թիւը, խօսք չունի, շատ աւելի սակաւ պէտք է լինի, քան ամեն մի լրագիր կամ մի այլ ոչ մասնագիտական ամսագիր:— Ուրիշ խօսքերով ասած. այս երևոյթը, այսինքն ,,Մանկավարժական Թերթի,, հրատարակութիւնը մի անբնական բան էին համարում հայ հասարակութեան համար:

Բայց մենք սորան բոլորովին հակառակն էինք մտածում, հակառակն էինք զգում, որովհետև կեանքի մէջ, իրողապէս, գործնականապէս հակառակն էինք դիտում, հակառակը փորձում: մենք պարզ տեսնում էինք, որ մեր ուսումնարանական գործը վերջին տասը տարին զարմանալի նշանաւոր քայլ արաւ դէպի առաջ. մեր աչքի առաջ հայ դպրոցը իւրեան բոլորովին թափեց հին դարերի փոշուց. մենք տեսնում էինք ինչպէս այս նոր գործը սկսեց մեր հայ երիտասարդութիւնը. մենք զգում էինք դորա կռիւը, պատերազմը խաւարի հետ և դորա կատարեալ յաղթութիւնը շատ տեղերում և նոյն յաջողութեամբ վերջանալու յոյսը միւս տեղերում:

Իսկ այդ բանը ի՞նչ մշակեց, ի՞նչ արդասիք տուեց, կամ ի՞նչ հողի վերայ կանգնեց և ո՞ւր է տանելու: Ահա այս էր գլխաւոր խնդիրը, որը մեր հասարակութեան առաջ մի անծանօթ աշխարհ էր ներկայացնում: Մինչև այդ ուսումնարանական յեղափոխութեան ժամանակակիցը ամենքն էլ քաջ գիտէին և հասկանում էին մեր դպրոցների մէջ աւանդած ուսման դաղափարը. ամենքը գիտէին, որ մեր ժողովրդական ուսումնարաններում սովորացնում էին գրաբար Սաղմոսը, Նարեկը, Զամչեանը, այսինքն միայն կարդալ և գրել երկուսն էլ

նոցա հաղորդակցելով։ Երկրորդ ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ «Մանկավարժական Թերթը», իւր առաջին գրքոյկից արդէն սկսեց համակրութիւն գտնել հայ հասարակութեան մէջ և այդ համակրութիւնը մինչև ցայսօր շարունակւում է աճել և մեծանալ այն աստիճանի, որ Տաճկաստանի Հայերի մէջ, Կոստանդնուպօլսում, ինքն ըստ ինքն, բնականաբար հիմնւում է դորա գործակալութիւն ամբողջ Տաճկաստանի Հայոց և նոցա դպրոցների մէջ տարածելու համար։ Ընդ սմին չըմոռանանք նոյնպէս և այն համակրութիւնը, որը ցոյց տուին Տաճկաստանի հայ պարբերական թերթերը, մեր ամսագրի վերայ խօսելով իւրեանց պատուական էջերում. սա արդէն քաջ յայտնի է մեր ընթերցողներին։

Երրորդ ապացոյցը և ընդ նմին ամենագլխաւորը այն է, որ մեր ուսուցիչները զգացին մանկավարժական ամսագրի կարևորութիւնը իւրեանց ընտրած վսեմ և ծանր գործի առաջադիմութեան համար։

Նոքա «Մանկավարժական Թերթը», համարեցին իւրեանց օրգան, իւրեանց ընդհանուր գործ, որովհետև դորա մէջ կենտրոնացաւ նոցա բոլոր ուշադրութիւնը, նոցա սպասելիքը։ Նոքա տեսան, որ իւրեանց որոնածը կարող են գտնել նորա մէջ, իւրեանց տարակուսանաց բաւարարութիւն ստանալ նորանով։ Սորանով ուսուցչաց դասը սկսեց փոքր ի շատէ կրիտիկական աչքով նայել դասատուութեանց եղանակների վերայ, մինչև ցարդ մեր մէջ լոյս տեսած դասագրքերի և այլ ձեռնարկների վերայ, նա սկսեց աւելի գիտակցաբար գործել իւր նուիրական ասպարիզում։

Ուրեմն կատարեց արդեօք «Մանկավարժական Թերթը», իւր խոստումը համաձայն իւր առաջարկած ծրագրին թէ ոչ։ Այս հարցմունքիս պատասխան վաղուց մենք սպասում էինք լսել Թիֆլիզում հայ պարբերական թերթերից, բայց դժբաղդաբար մեր այդ օրինաւոր ակնկալութիւնը 'ի դերև ելաւ. դոցանից ոչ մինը մի ձայն, մի խօսք անդամ չարտասանեց։ Կարելի է, որ շատերը կամենային մանաւորով այս բանը բացատրել, սակայն այդ տեսակ մակաբերութիւն սխալ կը լինէր։ Մենք այդ երև-

«կրփորձեն և միս կողմն կրգրեն»։ «Կարող ենք բացարձակ ա-
«սել թէ «Մանկավարժական Թերթի» հրատարակութիւնը մի նոր
«և սիրուն երևոյթ է մեր հայ պարբերական հրատարակութեանց
«հորիզոնի վերայ*)»։ Մենք այս թանկագին խօսքերով մեզ բոլո-
րովին բարոյապէս բաւականացած ենք համարում, որից յետոյ
մեզ այսուհետև մնում է միայն գործը առաջ մղել, որքան որ
մեր ոյժերը մեզ կընկերեն։

Գալով այն խնդրոյն թէ արդեօք նիւթապէս ապահով-
ուած է «Մանկավարժական Թերթի» հրատարակութիւնը թէ
ոչ, մենք հարկաւոր ենք համարում հրապարակապէս յայտնել,
որ այստեղ ևս մեր յոյսերը կատարուած ենք տեսնում։

"Մանկավարժական Թերթը,, մենք տպագրել սկսեցինք
այս տարի 350 օրինակով, որոնցից այժմ մեզ մնա մնում է
շատ սակաւ և յոյս կայ, որ առաջին տարուայ հրատարակու-
թեան բոլոր օրինակները բաժանուին, ի նկատի ունենալով, որ
մինչև այսօրս դեռ շարունակւում է թէ քաղաքիս մէջ և թէ
գաւառներից դորա պահանջը։ Մեր բոլոր ծախքը դորա հրա-
տարակութեան վերայ հասնում է մինչև 930 ռուբլու. բաժա-
նորդագին ստացել ենք մինչև ցայժմ 953 ռուբլի, ապառիկ
մնում է դարձեալ 250 ռուբլի, ուրեմն տարեկան մուտք եղել
է 1203 ռուբլի։ Ծախքը մուտքից հանելով մնում է դարձեալ
273 ռուբլի արդիւնք։ Սորանից պարզ տեսնուում է, որ «Ման-
կավարժական Թերթի» հրատարակութիւնը արդէն ապահով-
ուած է։

Ի նկատի ունենալով այս հանգամանքը մենք որոշեցինք
երկրորդ տարին հրատարակել «Թերթը» հետևեալ փոփոխու-
թեամբ.

1. Աւելացնել երկու թերթ ևս իւրաքանչիւր ամսական
գրքոյկի վերայ, այնպէս որ փոխանակ 64 երեսի իւրաքանչիւր
թիւը բաղկացած կը լինի 96 երեսից։

2. Տարեկան 12 գրքոյկի տեղ կը հրատարակուի 10 գրը-
քոյկ, ամառուայ յուլիս և օգոստոս ամիսների գրքոյկներ այլ

*) «Արևելեան Մամուլ» Հանդէս ամսեայ. 1879 փետրվար. Զմիւռնիա.

այդ երկու ամսուայ դրքոյկները մնում են համարեա թէ առանց կարդալու, իսկ սեպտեմբերին երբ ուսումն ամենայն տեղ սկսւում է, դրքա այնուհետև կորցրած կը լինին մասամբ իրենց թարմութիւնը, իսկ կարդալու համար ծանր՝ երեք ամսուայ թիւերը միասին հաւաքուելու պատճառաւ։ Ի նկատի առնելով այս հանգամանքները՝ մենք օգտակար համարեցինք մի ընտիր հեղինակութիւն՝— թարգմանած կամ ինքնուրոյն աշխատութիւն— բաժանել «Թերթիս» բաժանորդներին ամառը կարդալու և ուսումնասիրելու համար։

Վերջացնելով մեր խօսքը՝ մեզ մնում է այնուհետև յայտնել հրատարակաւ խորին շնորհակալութիւնս մեր մշտական աշխատակից պ. Ա. Բահաթրեանցին, որը բոլորովին անձնատուր լինելով գործին՝ չէ խնայել իւր ժամանակը «Մանկավարժական Թերթիս» յառաջադիմութեան համար։ Պ. Ա. Բահաթրեանցը այսուհետև ևս շարունակելու է իւր մշտական աշխատակցութիւնը նոյն եռանդով, ինչ եռանդով որ ամսագրիս առաջին տարուայ հրատարակութեան մէջ աշխատակցել է։

Յայտնում ենք նոյնպէս մեր շնորհակալութիւնը և՛ տիկին Սոֆիա Բ.—ին և պ. Ս. Մանդինեանին, որոնք շարունակելու են այսուհետև ևս աշխատակցել «Մանկավարժական Թերթի» մէջ։—

Հաջայոյս ենք, որ հրատարակութիւնը կընդունէ մեր հրատարակութիւնը երկրորդ շրջանում ևս նոյն համակրութեամբ, ինչ համակրութեան որ նա արժանացրեց սորա առաջին շրջանը։ Այդ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆԸ «Մանկավարժական Թերթի» աշխատողների համար կը լինի ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄԻԱԿ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ։

այստեղ տպում ենք, ամենայարմար ժամանակ է սկսել իւր գործունէութիւնը։ Ռուսաստանցի Հայերը համակրել են այդ ընկերութեանը և յոյս ունինք, որ կըտանապատկեն իւրեանց նուիրատուութիւնները յօգուտ դորա։ Որովհետև Թիֆլիզու «Մեղու» լրագրի խմբագրութիւնը բաց է արել հանգանակութիւն ի նպաստ Կիլիկեան Ընկերութեան, վանորոյ նուիրատուները թող բարեհաճին այդ ուղղակի հասցնել նորան։ Իսկ հարկաւոր դէպքում «Թերթիս» խմբագրութիւնը նոյնպէս ուրախութեամբ կընդունէ ամենայն տեսակ հանգանակութիւն յօգուտ Կիլիկեան Ընկերութեան, ուղարկելով այդ ըստ պատկանելոյն։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Յայտ է թէ հոգելոյս Կարապետ վարդապետ Շահնազարեանի կտակը կը պահանջէր որ Կիլիկիոյ մէջ բացուէր այդ դպրոցը որ Խասգիւղի մէջ հիմնուեցաւ Նուպար—Շահնազարեան անուամբ։ Եթէ զանազան պարագաներ չեն ներած յայնժամ Հայրենասէր վարդապետին փափագն իրագործել, իւր սանները մտածեցին թէ իրենք պարտաւոր են գործադրել իրենց բարերարին յետին կամքը։ Ուստի, 1871 սեպտեմբեր 1-ին, Խասգիւղի կրթարանին մէջ հիմնեցին Վարժարան Ընկերութիւնը, որոյ նպատակն էր մի վարժարան բանալ Կիլիկիայի Հաճըն քաղաքին մէջ։ Վարժարանը բացուեցաւ արդարև, և կը շարունակուի ցարդ անխաբան, Հաճընի Ազգայնոց համար լուսաւորութեան կենտրոն մը հանդիսանալով։

Սակայն, Շահնազարեանի սաներէն ոմանք, նկատելով որ Վարդանեան Ընկերութեան շրջանակն ընդլայնելու ժամանակը հասած էր, ներկայացաւ բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հօր, և խնդրեցին որ հաճի իւր բարձր հովանաւորութեան

ղովոյ դիւաններուն հաւանութեամբ կընդունուի պատուոյ անդամներ ալ, հետևեալ պայմաններով.

ա. Անձնիւր պատուոյ անդամ պարտի տարին առնուազն երեք Օսմանեան ոսկի բաժնեգին վճարել։

բ. Անձնիւր պատուոյ անդամ իրաւունք ունի Ընդհանուր Ժողովոյ նիստերուն ներկայ գտնուիլ և իւր դիտողութիւնները գրաւոր կերպով հաղորդել Դիւանին։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ.

Յօդուած 5. Ընկերութեանս Վարչական մարմինը կըկազմեն Ընդհանուր Ժողով մը և Գործադիր Ժողով մը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

Յօդուած 6. Ընդհանուր Ժողովոյ պաշտօնն է

ա. Ընկերութեան բոլոր գործոց վերատեսչութիւնը և համարառութիւնը ամեն օրինական նստի մէջ, որ երկու տարիը անդամ մը տեղի կունենայ։

բ. Ընտրել երաշխաւորեալ գանձապետ մը, որ պաշտօնապէս և անհատապէս պատասխանատու է Ընդհանուր և Գործադիր Ժողովոց, ընտրել նաև Գործադիր Ժողովոյ միւս անդամները և կնքապահ մը որոյ պաշտօնն է կնքել ընկերութեան պաշտօնագրերը և տոմսերը։

գ. Գործադիր Ժողովոյ գործելու եղանակը գծել գրաւոր հրահանգով։

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ.

Յօդուած 7. Գործադիր Ժողովոյ պաշտօնն է.

ա. Ընկերութեան ընթացիկ գործերը կատարել.

բ. Պատրաստել ընկերութեան հաշուեցոյցը և դպրոցական յայտագիրը և Ընդհանուր ժողովոյ վաւերացմամբ գործադրել զայնս։

Յօդուած 8. Գործադիր ժողովը կը բաղկանայ եօթ անձերէ, որք հաւասարապէս պատասխանատու են Ընդհանուր ժողովոյ։

թեանց տեղեկագիրը, ամեն չորս ամիսը ընկերութեան հաշիւները և մնաւկին վիճակը, իսկ յունուարի նախին Ընկերութեան տարեկան տեղեկագիրը։

Յօդուած 21. Գործադիր Ժողովոյ հաշիւները և մնաւկին վիճակը քննելու և արդիւնքը Ընդհանուր Ժողովոյ տեղեկագրելու պաշտօնով, չորս ամիսը անգամ մը երեք անդամէ բաղկացեալ հաշուեքննիչ յանձնաժողով մը կընտրուի Ընդհանուր Ժողովէն։ Գործադիր Ժողովոյ անդամք չեն մասնակցիր սոյն քուէարկութեան։

Յօդուած 22. Գործադիր Ժողովը պարտի նիստ ընել տասնհինգ օրը անգամ մը։

Յօդուած 23. Գործադիր Ժողովոյ որոշումները անդամոց մեծամասնութեամբը վաւերական են։

Յօդուած 24. Գործադիր Ժողովը սահմանական պարագայներու մէջ կարող է ազատաբար գործել, բայց պատասխանատուութիւնը իւր վերայ առնելու և Ընդհանուր Ժողովոյ յաջորդ նախին դրաւոր բացատրութիւն տալու պայմանաւ։

Յօդուած 25. Ընդհանուր Ժողովոյ դիւանի պաշտօնավարութիւնը երկամեայ և Գործադիր Ժողովոյ պաշտօնավարութիւնը միամեայ է։

ՀԱՍՈՅԹ

Յօդուած 26. Ընկերութեան հասոյթն է առ այժմ

ա. Ընկերաց ամսատուրք.

բ. Պատուոյ անդամոց բաժնեգինք.

գ. Ի նպաստ Ընկերութեան հաւաքեալ նուէրք։

Յօդուած 27. Հասոյթին հարիւրին տասը պահեստի կը մնայ։

ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ.

Յօդուած 28. Կանոնագիրս վերաքննելի է Ի հարկին, այլ նպատակն ու ոգին անփոփոխ են։

Կոստանդնուպոլիս 13 մայիսի 1879

ԲԱՌԱԳԻՐՔ

ԳԱՂԼԻԵՐԷՆ, ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՏԱՃԿԵՐԷՆ

ԼԵԶՈՒԱՑ

ՅՕՐԻՆԵԱԼ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ ԲԱՌԱՐԱՆԱՑՆ

ԼԻԴՐԷԻ ԵՒ ԳԱՂԼԻԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ

ԵՒ ՀՈԽԱՑԵԱԼ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲՔ Ի ՆԱԽՆԵՒՈՅ

Ի ՁԵՌՆ

ՆՈՐԱՅՐԻ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՅԻՈՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շատ ժամանակէ ի վեր ընդհանուր փափաք մ՝ էր ազգիս մէջ գաղղիերէն, հայերէն և տաճկերէն լեզուաց բառագիրք մ՝ ունենալու ճոխագոյն քան զհրատարակեալս մինչև յարդ։ Տասնուչորս տարի կայ որ ձեռք զարկած եմ այսպիսի բառարան մը յօրինելու, ի սկզբան անդ հետևելով Պէշըրէլի և Բուագվէնի ընդարձակ բառարաններուն, բայց վերջապէս առաջնորդ բռնելով միմիայն Լիդրէի քառահատոր բառարանը, որ դանձ է գաղղիերէն լեզուին։ Բառերու սահմաններուն փիլիսոփայական ճշդութիւն, նշանակութեանց բնական և հանճարեղ դասաւորութիւն, այլ և այլ առումներու (acception) և երանգներու (nuance) գեղեցիկ զանազանութիւն, ստուգաբանական մասին մէջ խոր հմտութիւն և նրբիմաց քննադատութիւն միով բանիւ գաղղիական հին և նոր բարբառոյն ծովածաւալ տեղեկութիւն, այս ամենայն յատկութիւնք կը զուգընթանան Լիդրէի գործոյն հոյակապութեան դրոշմը տալու։ Ինձ ուրիշ

հայերէն համանշանակ բառ մը կը գտնեմ, խորշելով է պունկ ինչ, է Լուչուն ինչ, է գործէ ինչ, չոր ցամաք բացատրութիւններէն, որոնցմով թարգմանութիւն ընելն անհնարին է: Այսչափս բաւական համարելով գաղղերէն մասին համար, կ'անցնիմ հայերէն մասին:

Իմ ամենամեծ ուշադրութիւնս, խնամքս և ջանքս նուիրած եմ հայերէն մասին: Ի մանկութենէ սիրելի եղած է ինձ նախնեաց մատենագրութիւններ կարդալ, բառեր և ոճեր քաղել, բառերու ծագումը և ճիշդ նշանակութիւնը փնտռել, ձեռագրաց աղաւաղեալ ընթերցուածները ուղղել: Ցայտարարութեանս անձուկ շրջանակն չի ներեր որ երկարօրէն յիշեմ հոս բազմամեայ խուզարկութեանցս և ուսմանցս արդիւնքը: Առ այժմ կարճ ի կարճոյ քանի մը օրինակով շատանամ. ա. Աղբեղբուկ, բոյսի անուն (լտ. Hibiscum?) վրիպակաւ հասկցուած է աղտ պղնձի կամ ծիրտ հաւու. Տես Հայկազեան բառգիրք, և Վրուրի Որմզդանայ Բուրաստանք, Ա. տող 27:

«Դու զքամածոյ չանչն ի յանկեան ուրեք մրթերս բայօթեագ,

Խառն ի խուռն ընդ աղբղբուկս վառեկի դէղ առ ի փուտ:» բ. Բաղէն, տեսակ մը գահաւորակ կամ դեսպակ Դ դարու, որու կը լծուէին ջորիներ, լտ. Basterna, գղ. Basterne, մեկնուած է canape կամ sofa, տճ. Էմինեան Basterne բառի համար կըսէ. «կառք ինչ առ նախնիս», իսկ sofa բառը կըմեկնէ. «բազմոց արևելեան. բաստեռն». և մինչև իսկ մեծն Հ. Արսէն բաստեռն դրած է բազմոցի մտքով Դրախտ Կորուսելոյ մէջ, Դ տող 305:

«Մինչ ինքեանք ի կողմ եղեալ ոչն առնուին առ ի հանդիստ:
Ի փափկիկ սիզաբուսակ ծաղկանըկար ի բաստեռունս»:

դ. Բաշխ, լտ. Acorus և տճ. Էմինեան ոլոռ կոչուած բոյսն, (որ կը ըսուի նաև Բաշխաղ կամ Բաշղաղ, և ոչ Բաղշաղ, ինչպէս կը դնէ Հայկազեանն,) հասկցուած է յունարէն ա՛կարոն, որ է տեսակ մը պզտիկ միջատ կամ ճճի, գղ. Acare, և ըստ այնմ Էմինեան կը դնէ բաշխ Blatte, Charançon և Mite բառերուն դիմաց, որ որդ կամ ուտիճ կընշանակեն: դ. Քէրէշ, որ կընշա-

և ի դիւրութիւն թարգմանչաց կը դնեմ շատ գաղղիերէն դարձուածներ, որոնց հայերէնը յաջողած եմ գտնել ի գրոց նախնեաց. նոյնպէս շատ ոճերու և բառերու վկայութիւններ, որ բառարանաց մէջ չեն գտնուիր և ես տպագիր կամ ձեռագիր մատեաններէ հանած եմ, կաւելացնեմ ի ստորոտ գաղղիերէն բառին։ Այսպէս են օրինակ իմն Prendre le mors aux dents Առնուլ զսանձս յատամունս.— Rendre à quelqu'un les derniers honneurs, Հատուցանել զհուսկ յետին աւուր պատիւ. Brûler l'étape, Զանց առնել կամ անցանել զօթևանաւ. (Էմինեան կը դնէ. «Ոչ դադարեալ ի միում օթևանի յառաջ խաղալ.»)— Rouvrir կամ De'chirer une blessure, Խարխարել զվէրս.— Couler à pleins bords, Գալ կամ հոսել դարիւ և դարիւ. (Էմինեան Onduler բայի համար կը դնէ. «Տատանել. դարիւ և դարիւ գալ։») Մի և նոյն գաղղիերէն բային ըստ զանազան տեղեաց հայերէն այլ և այլ բայերով թարգմանուիլը մեր լեզուին մեծ զարդերէն մէկն է. անոր համար յետ s'Abandonner բայը մեկնելու, Տալ զանձն, անձնատուր լինել, կ'աւելացնեմ, s'Abandonner à la cole're Զառածանիլ ի ցասումն.— s'Abadonner à la de'bauche, Հատանիլ յանառակութիւնս.— s'Abandoner à l'amour des femmes, Հարկանիլ 'ի սէր կանանց.— s'Abandonner à la joie, Հեղուլ զանձն յուրախութիւն։ Շատ տեղ հարկ համարեցայ դնել Ասուածաշունչ գրոց սեպհական ասացուածներ և բացատրութիւններ, որոնք պիտանի կ'ըլլան ի թարգմանութեան հոգևորական կամ բարոյական գրուածոց. այսպէս են l'Abomination de la de'solation, la Bouc e'missaire, amasser des Charbons ardents sur la tête des son ennemi, les Écailles lui sont tombe'es des yeux, և այլն և այլն։

Բայց հին նախնեաց ոսկեղէն և արծաթի դարերուն լեզ-

մէջ։ Նախ, Accentuer բայը կարծեմ թէ չենք կրնար շեշտել թարգմանել, եթէ կ'ուզենք նախնեաց հեղինակութիւնը յարգել. յետոյ, մինչդեռ կը ջանանք տաճկաբանութիւններէ մաքրել մեր լեզուն, ինչո՞ւ օրէ օր դաղղիաբանութեամբը կը խուկենք զայն։ Մեթէ կարելի չէ՞ վերոյիշեալ հատուածն հայ ականջաց աւելի ընտանի և աւելի վայելուչ բացատրութեամբ դաբձնել։

ուին հարստութեամբքը շատանալ և պղնձի ու մինչև իսկ խե-
ցեղէն դարերու մատենագրաց բառերը իբրև խոտան մէկդի
նետելը համարեցայ հայերէն լեզուն աղքատացնել, վասն զի
յաճախ ուր գրաբարը կը չքաւորի, յետին դարերու լեզուն կը
լեցնէ հնոյն պակասութիւնը։ Յետին դարեր ըսելով կ'իմա-
նամ ԺԲ դարէն մինչև ԺԷ դարուն վերջը եղած միջոցը, և այս
վեցդարեան շրջանին լեզուն կ'անուանեմ Ստորին հայերէն, նը-
մանութեամբ Ստորին յունարէնի (bas grec կամ basse gre'-
cite') և ստորին լատիներէնի (bas latin կամ basse latinite')։
Զափազանցութիւն չերևայ ըսելս, որ երկհատոր Հայկազեան
բառարանին ստուարութեամբն Ստորին հայերէնի ալ բառարան
մը կրնայ կազմուիլ. այնչափ ճոխ է այս լեզուն բառերու, ոճերու,
ձևերու և ասացուածոց մասամբ։ Այս լեզուով գրուած են ա-
ռաւել կամ նուազ յատակութեամբ Շնորհալւոյ հանելուկներն,
Մատթէոս Ուռհայեցւոյն, Կիրակոսի, Վարդանայ, Միխայէլ
Ասորւոյ, Ստ. Ուռպելեանի, Մաղաքիա Աբեղայի, Թովմայ Մե-
ծոփեցւոյ, Ֆրա Մարթինի, Առաքել Դաւրիժեցւոյ պատմու-
թիւններն.— Բժշկարաններ, որոնց գլխաւոր հեղինակքն են
Մխիթար Հերացի, Ամիրտովլաթ Ամասիացի, Ասար Սեբաստա-
ցի.— Սմբատ Գունդստապլի Անսիզն Անտաքոյ և Օրինաց գիր-
քը.— Վաստակոց գիրքը.— Քիմիաբանութիւն (alchimie), ո-
րու բնագիրն կը պահուի ի Բարիզ յԱզգային Մատենադարա-
նին.— Բժշկարան գրաստու կամ Ձիաբարմանութիւն, որ դը-
բախտաբար թերի է և հրատարակուած է ի Բազմավէպի,
1867, էջ 354.— Ոսկեփորիկներ, Երաշահաններ, Տաղեր, Ա-
ռակներ, Ախտարք, այլ և այլ Լուծմունք և Մեկնութիւններ,
և այլն։ Երանի՜ թէ Ստորին հայերէնի վերաբերեալ գրաւորա-
կան գանձեր, որ ամբարեալ են վանքերու մատենադարանաց
մէջ, հրատարակուէին ամբողջապէս մինչև յետին խեշերանք
համարուածը։ Հին նախնեաց լեզուն ըստ բաւականի ճանչցուած
և քննուած է, և հաւանական չերևար որ մեզի ծանօթ գը-
բաբարը զգալի կերպով հարստանայ նորանոր ձեռագրաց գիւ-
տովը. բայց ԺԲ դարէն սկսեալ մինչև ԺԷ դարուն վերջը հաս-
նող հայկական անկեալ մատենագրութեան շրջանն կոյս ան-

դաստան մ՝ է, որ եթէ մշակուի ճարտար ձեռքերէ, հաւաստի եմ թէ պիտի բղխեն անբաւ տոհմականք ի բարգաւաճանս հայ լեզուին։ Օրինակ մը տալու համար, ի՞նչ պէտք է ըսենք գաղղիերէն se Cabrer (ձիուն երկու ոտքի վրայ ելնելը, տճ. շան գալգմաղ) և Ferrer (un cheval) (ձիուն ոտքը երկաթ դամել, տճ. նալ ուրմաղ) բայերուն. մեզի ծանօթ դրաբարը չունի ոչ միոյն և ոչ միւսոյն հաւասարազօրները, բայց Ստորին հայերէնը երկու գեղեցիկ բայ կ՝ընծայէ մեզի, se Cabrer-ի կը ըսէ Ծառանալ, և Ferrer-ի կ՝ըսէ՝ Լուսնել. ահաւասիկ վկայութիւնները. «Արձան կանգնեաց նոցա, և իւրաքանչիւրումն ձի մեծ ծառացեալ[1]) ի վերայ երկու ոտին». Ֆրա Մարթին, Պոսոնենկեան հայոնէրայ և փահանայապետայ Հռովմայ։ «Գայ ջորին, և էր նոր լուսնած[2]), և ասէ. իմ թուական գրեալ կայ ի սրբակս իմ, եկայք կարդացէք և տեսէք թէ որչափ տարուոյ եմ... և գայն աւատաց և գնաց ի կարդալ . . . և նա մեծ կարի զօրութեամբ եհար զձակատ գայլուն և ջախջախեաց.» Վարդան առակախօս։ Այս կարդի բառերուն և ոճերուն առջև կրդնեմ Ս. գլխագիրը, որ կընշանակէ Ստորին հայերէն։

Իմ բառարանիս մէջ հիւրընկալած եմ նաև շատ մը գաւառական բառեր, որ կը վերաբերին գլխաւորապէս մշակութեան և ընտանեկան կենաց։ Բայց կը ցաւիմ ըսելու, որ փափաքածիս համեմատ չկրցայ ընդարձակ տեղի շնորհել գաւառական տա-

---

[1]) Մինչև հիմա Մշեցիք ծառանալ կ՝ըսեն տայլին համար երբ որ դաւիվերէ եղնելու ժամանակ եղնեղուն կողը կբռնի և տայլը եռևի երկու տնկոներուն վրայ կը տնկուի։ Հ. Աբսէն Բաղրատունի se Cabrer բայը այսպէս կբնորոշուի Մելտոնի մէջ.

«Առնուծին խայտալով յառնէր կանգնէր ի թաթս ոտին։» Դ. տող 314։

[2]) Ձիուն ոտքի երկաթը, տճ. նալ, Լուսին ըսուած է Արևստակէս Լատինիերայոյ պատմութեան մէջ. «Եւ անտի դարձեալ՝ զեկեղեցիս կամուղիսարանին ի զարգուց կողուտ կողոպուտ արարին, և զբևեռս խաչին հանեալ՝ նախատանօք տային թէ Ցանիմք և ձիոյն լուսին առնեմք . . . կարծեմ թէ այսոքիք ի դէպ անց ընդ նոսա, վասնզի զի զարբանաղրոշմ նշանին բևեռան հանեալ ի դուռն կամուղիսին, նախատանօք տային՝ լուսին առնել երևելոյն։» Գլ. Բ. ԿՁ 8, 11։

ներ. անոր համար կը խնդրեմ դաւառաբնակ ազգայիններէ որ հաղորդեն ինձ հայ գիւղականաց լեզուին բառերը ճիշդ և ոչոչ նշանակութեամբք։ Հաղորդողաց անունքը երախտագիտութեամբ պիտի յիշեմ բառարանիս մէջ։ Դաւառական բառերուն յայտարար նշան ընտրած եմ Դ. գլխագիրը։

Կը մնայ վերջապէս հայկական նորաբանութիւնն, որով կը լեցնենք մեր այժմեան պիտոյքը նոր գաղափարներ բացատրելու կամ նոր գիտութեանց լեզուն խօսելու համար. այս նորաբանութիւնս երկկերպի է, կամ հին բառերու նոր նշանակութիւն տալով, ինչպէս ըրած ենք Ջութակ, Դաշնակ, Տաբատ, Հեղինակ բառերուն համար, որ կը համապատասխանեն Violon, Piano, Pantalon, Auteur բառերուն, կամ բոլորովին նոր բառեր ստեղծելով, ինչպէս են մեծաւ մասամբ գիտութեանց բառերն։ Նորաբանութիւնն կարևոր մաս մ՚ ունի իմ բառարանիս մէջ. շատ բառ ես հնարած կամ յարմարացուցած եմ, կայ ալ որ այլոց հնարածն կամ յարմարացուցածն է. միայն կանոն բռնած եմ ինձ հայերէն լեզուի բարդութեան կանոնաց հակառակ կամ հայ ականջաց համար խորթ, դժուարալուր և անհեթեթ բառեր չընդունիլը։ Այն բառերը, որ հին են բայց նոր առմամբ կը գործածենք, զանազանած եմ կրկին ** աստղանշանով. իսկ նորահնար բառերը կ՚որոշեմ մէկ * աստղանշանով։

Գալով տաձկերէն մասին, աւելորդ սեպեցի բացատրութեան համար տաձկերէն դնելը, և միայն գաղղիերէն բառերու համանշանակ տաձկերէն բառերը դրի, դիտելով միշտ ճշդութիւնը։

Հաւասիկ ընդհանուր և համառօտ պատկեր իմ բառարանիս։ Իմ նպատակս, ինչպէս արդէն ըսի, հայ բանասիրաց բառագիրք մը ընծայել եղած է, որու մէջ հայերէն լեզուի հարստութիւնն իւր հին, միջին և նոր տարբերութեամբ ըստ կարի ամփոփուած ըլլայ. այս նպատակիս հասնելու համար չորեքտասանամեայ աշխատութիւն մը չէ կրցած խրտեցնել զիս, և հիմայ որ տպագրութեան ձեռք պիտի զարնեմ, մեծագումար ծախուց խնդիրը զիս չի զարհուրեցներ, վասն զի գիտեմ որ

հայ ազգն ամեն ժամանակ եռանդեամբ ընդունած է իւր մը-տաւորական զարգացմանն օգնող գործիները։ Անշուշտ գաղղի-երէն—հայերէն բառագիրք մը իւր ամենազգի գիտութեանց անուանակոչութեամբքն ոչ այնչափ անհատի մը, որչափ հայ-կական Ակադիմիոյ մը կամ գիտնականաց ակմբի մը գործն է, որոնց հեղինակութեան առջև ամենայն ոք պարտական է գը-լուխ խոնարհեցնելու. անհատի մը գործը ի մասին բառագրոց ոչ երբէք օրէնքի ոյժ ունի։ Բայց ես մխիթարուեցայ և քա-ջալերուեցայ մտածելով որ եթէ օր մը գիտնոց ժողով մը ու-զենայ ընծայել գաղղերէնէ ի հայերէն ընտրելագոյն բառարան մը, թերևս իմ աշխատութիւնս բոլորովին անպիտան չդատուի։ Արդէն Լիդրէի պէս նշանաւոր լեզուագիտի մը քանի մը գաղ-ղերէն բառերու ծագմանն վրայօք իմ կարծիքներս յարգելը և իւր Ցաւելուածին (Supple'ment) Մնացորդաց (Additions) մէջ յիշելը*), համարձակութիւն կուտայ ինձ կարծելու որ հայերէն լեզուի մէջ ալ ըրած գիւտերս և տեսութիւններս պիտի ունե-նան իրենց արժէքը։ Թող հմուտք հայերէնի քննեն իմ բառա-րանս, որ կարծեմ ընդարձակ ասպարէզ կը բանայ հայկաբանա-կան խուզարկութեանց. եթէ գտնուին թերութիւններ, յա-ջորդ տպագրութեան մէջ կուղղեմ զանոնք. իսկ եթէ վկայուի

---

*) Տես Barbiton, Bouccassin, Caraque Carnal, Cendal, Chat, Chebec, Galipot, Orcanète բառերը։ Մեծանուն հեղինակին հաղորդած է նաև Censal, Colcotar, Épinard և Pènid (կամ Alphènic) բառերուն ծագումը։ Censal, զոր մուսայմանը կը գրէ նաև Sansal, է արաբերէնն սէնսալ. Colcotar, զոր կը համարի ԺԶ դարուն մէջ Պարակելսոսի հնարուած բառ, է արաբերէն, և ես գտած եմ Վենետիկի Մխիթարեան Յ. Յ. Հարց գրատան ձեռագրի մը մէջ, որ գրուած է 1307-ին, այսպիսի մեկնութեամբ. «Կալկա-տար. այրած արջասպ օխթիկի». Épinard, զոր կլատուզարանի, èpine բառէն, և ես նշանակած էի արևելեան ծագում ունենալը, պրս. սիֆանաֆ, արբ. խաֆանաճ, հյ. սպանախ. Pénide, զոր կրնանի յն. Բէնի՛ճ բառէն, և ես գը-ըրած էի պրս. ֆանիդ բառն ըլլալը, որ Մխիթար Հերացւոյ բժշկարանին մէջ գրուած է «վենետ շաքար»։ Այս չորս բառերուն համար իմ կարծիքս յիշել զանց ըրած է Լիդրէ, վասն զի Ցաւելուածին վերջը Պ. Մարսել Տրվիզ ալ Ինչդ նոյն ստուգաբանութիւնները գրած է իւր Dictionnair des mots d'origine orientale փոքրիկ բառարանին մէջ։

որ շատ տեղ իրաւացի են իմ դիտողութիւնքս, գրած բառերս ընտիր և ճշդիւ, գտած ոճերս և ասացուածներս՝ հայերէն լեզուին ծածկեալ կամ անյայտ հարստութեանց յայտնութիւն, այս վկայութիւնս պիտի համարիմ մեծագոյն վարձատրութիւն իմ բազմամեայ և բազմաջան երկոցս։

Ինձի հետ թղթակցիլ ուզողը բարեհաճի հետևեալ երեսագիրը գործածել.

M. NÉANDRE N. DE BYZANCE

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԶԱՆԴԱՑԻ

Seghpos khan, Galata,

CONSTANTINOPLE

ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՄԲՈՐԴ, Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ։ ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ. ԵՐ. Ա—ԺԴ ԵՒ 340.

Կ. ՊՕԼԻՍ 1879 Թ.

Կարդալով «Թորոս Աղբար» գիրքը, մենք պարտաւորութիւն համարեցինք ծանօթացնել նորա հետ մեր ընթերցողներին որքան կարելի է հանգամանօրէն և մանրամասն, ի նկատի ունենալով գրքի նպատակը, բովանդակութիւնը և այն տեղեկութիւնները, որոնք ամեն մի հայ իւրեան սուրբ պարտաւորութիւն պէտք է համարի գիտենալ և ուսումնասիրել։ Պոլսեցի հայք արդէն սկսել են հասկանալ իւրեանց պարտաւորութիւնը— Հայաստանը ուսումնասիրել Հայաստանի մէջ, կանգնելով այդ օրուանից դրական և հաստատ հողի վերայ։ Վաղուց էր հարկաւոր այդ կողմից սկսել գործը և պատրաստ լինել, որպէս զի երբ պատմական հանգամանքները մեզանից հաշիւ պահանջելու լինէին, ինչպէս որ պահանջեցին, մենք կարողանայինք հաստատ տեղեկութիւններով գիտնականօրէն պատասխանել այն հարցերին, որոնց վճռելով՝ Հայաստանը վերակենդա-

նութիւն, հոգի պէտք էր ստանար։ Բայց դժբաղդաբար այդ-պէս չէին սկսել, Հայը Հայաստանը չէր ճանաչում, Հայը Հայաստանի մէջ չէր ոլոնում իւր փրկութիւնը։

Այս գրքի հետ «Մանկավարժական Թերթի» ընթերցողներին մանրամասն ծանօթացնելու մէկ գլխաւոր պատճառն էս այն է, որ դոցանից մեծագոյն մասը անկարող է նորան ձեռք բերել անմիջապէս կարդալու, որով և զրկւում է այն կարևոր տեղեկութիւններից, որոց գիտութիւնը մի նոր լոյս է գցում մեր մինչև ցայժմ ունեցած հայեացքի և հասկացողութեան վերայ։ Մեր յօդուածի մէջ գլխաւոր տեղը ի հարկէ բռնելու են ուսումնարանաց վերայ տեղեկութիւնքը,

Գրքի հեղինակն է Գարեգին վարդապետ Սրուանձտեանց, Խրիմեան Մկրտիչ Արքեպիսկոպոսի աշակերտներից մինը, մեր մէջ արդէն յայտնի անձն է իւր գրականական աշխատութիւններով *) և եռանդուն գործունէութեամբ Հայկական անուանեալ Խնդրոյն մէջ։

1878 թ. ապրիլ ամսոյն վերջերը Կ. Պոլսոյ ամենապատիւ Ներսէս Սրբազան Պատրիարքը որոշել էր երեք վարդապետ ուղարկել Փոքր և Մեծ Հայաստանը. գնացողներից մինը Սրուանձտեանն էր։ Սոցա պաշտօնն էր, ինչպէս որ երևում է Պատրիարքի կոնդակից, վիճակագրել եկեղեցիները, դպրոցները, վանօրայք և նոցա կալուածները, հաւաքել կարևոր տեղեկութիւններ ժողովրդեան որպիսութիւնից և նորա կացութիւնից, և Հայաստան աշխարհի բարեկարգութեան և բարօրութեան յուսովը ամենքին մխիթարել։— «Այդ այն օրերն էր երբ Հայկական խնդիրը թև առած սաւառներ ու հասել էր Եւրոպիոյ մեծ տէրութեանց դահլիճները, և քաղցր յոյսեր կանխեր սփոփեր էր Հայաստանի աւերակներուն և Հայոց աւեր սրտերուն. հայրենի հողն ու հողոյն հաւասարած Հայն՝ կենաց նոր շարժում մը կ'ստանար։ Ս. Պատուիրակներն (**) իրենց բարձր

*) Գ. Վ. Սրուանձտեանի գրական գործերն են՝ Գրոց—Բրոց, Հնոց—Նորոց, Շուշան—Շաւաղշնոյ, Մանանայ, Քրիստոնէական Լայլն։

**) Մկրտիչ Խրիմեան և Խորէն Նար—Պէյ արքեպիսկոպոսները Բերլինի Վեհաժողովում (կոնդրէսում)։

տեղերէն կ'երևէին մինչև Հայաստանի խորն ու ձորը ի խաւարի նստող բնակչաց։ Իսկ լրագրութիւնն իբրև դետ կը հոսէր կրտարածէր յաջող ակնկալիքներ»։ Այսպիսի օրերն էր երբ հեղինակը ճանապարհ է ընկնում Հայաստանի խորքերը իւրեան վերայ դրած պարտաւորութիւնները կատարելու։ Յիրաւի՝ մենք տեսնում ենք բարեխղճմտաբար կատարած այդ պարտաւորութիւնները, ճանապարհների վտանգը, երկրի անիշխանութեան օրերը, Չէրքեզն ու Քուրդը, լեռներն ու ձորերը, արևն ու անհանդիստ ճանապարհները, և այլն չեն կարողացել վշտացնել ցաւ պատճառել հեղինակին, վասն զի «սիրով գնացի» ասում է նա, և «փոխանակ անոնց՝ հազարաւոր մխիթարութեանց կը հանդիպէի մեր հայրենական ջրերուն, հովերուն, մարգերուն, դրախտերուն, բերքերուն և պտուղներուն, համով հացին և կարմիր դինւոյն, հաւքերուն թռիչին ու կաքաւներուն կառաչին, ծաղկանց բուրմունքին և անտառին սոսիներուն, մաքուր կաթին, կովու իւղին, ձագուց մեղրին, Հայ մանկանց երամին, և այլ սրտագրաւ յափշտակիչ տեսարաններուն, որոյմով, կարի գուարթութիւն՝ կարի կորովութիւն եկաւ վրաս։— Հայ եղողը՝ Հայաստանի հողոյն վրայ ինքզինքը կրճատնաչէ, ինքզինքը վեհ և կենդանի կրգտնէ, փորձեցէք և տեսէք»։—

Իւր աշխատութիւնը երկու մաս է բաժանում. Առաջին մասի մէջ պարունակւում է հեղինակի ճանապարհորդութիւնը Սև Ծովի հարաւային ափում նաւահանգիստ Սամսոն քաղաքից սկսած մինչև Մալաթիա քաղաքը, այսինքն Փոքր Հայոց հիւսիսային կէտից մինչև նորա հարաւային կէտը, նկարագրելով շատ քաղաքներ և գիւղեր և վիճակագրելով նոցա բնակիչները, եկեղեցիները, վարժարանները և այլն և այլն։

Գրքի նպատակը իմանալուց յետոյ մեր ընթերցողները կարող են հարցնել մեզանից նորա անուան նշանակութիւնը և դաղանիքը։ Ի՞նչու հեղինակը իւր գրքոյկը «Թորոս Աղբար» է կոչում։ Սորա բացատրութիւնը մենք գտնում ենք նոյն իսկ այդ գրքի մէջ որը շատ գեղեցիկ կերպով նկարագրում է հեղինակը իւր աշխատութեանը այս անունը տալու շարժառիթը։ Այնքան հիանալի և գրաւիչ է այդ նկարագրութիւնը, որ անկարելի է,

որ ընթերցողի ոգևորութիւնը չը շարժուի դորան կարդալու ժամանակ։ Գարեգին վարդապետը այստեղ կատարեալ բանաստեղծ է մեր առաջ պատկերանում. ոգևորուած, վառուած եռեակայութեամբ նա հայրենեաց անշունչ առարկաների հետ է խօսում, նոցա դիմում, աղաչում, պաղատում, իւրեան մխիթարութիւն խնդրում։ Աշխատենք, որքան կարելի է ամբողջացնելով առաջ բերենք այդ նկարագրութիւնը։

Մեծ Հայաստանի Չորրորդ Հայք նահանգի գաւառներից մինն է Ծոփաց աշխարհ, Ծոփք մեծ. գրուած է նաև՝ Ծովք. առաւել անուանի եղած՝ Ծոփք կամ Ծովք Շնորհալւոյն հօր, տոհմին և եղբարց բնակավայր լինելով։ Իսկապէս մի ծով կամ ծովիկ կայ (4 ժամ երկայն՝ 1 ժամ լայն) Խարբերդին, Արղնու և Մալաթիոյ լերանց մէջ, բաժակաձև։ Սա ունէր իւր մէջ մի դղեակ, ուստի և անուանուած է Ծովք — դղեակ։ Այստեղ Հայաստանեաց եկեղեցւոյ և ազգի Շնորհքն է ծագել։ Այստեղ է ծնել, շնչել, լացել, երգել, գրել և աղօթել Ներսէս Շնորհալին, «ուստի, ասում է հեղինակը, և իմ այս անգամի ուղևորութեան ամենամեծ շահս եղաւ հանդիպել և երկրպագանել այս ծովիկին և դղեկին, ջրոց և տաճարի աւերակին, ուր ամենայն ինչ շնորհալի էր». «բոց ու կրակ եղած էր փափաք սրտիս մէջ, կըտաչորէր հոգիս և մարմինս. այնպէս կըզգայի, եթէ նոյն օրը չհասնեմ, չտեսնեմ, չհամբուրեմ այդ ջուրն ու հողը, պիտի մեռնիմ կարօտակէզ՝ աչքս բաց մնալով . . . : Արդէն հնար չէր ձի նստիլ. կը քալեմ, կըվազեմ, կըթռիմ, և ահա պաղ հով մը, քայլ մի ևս, և ահա ծովքն իւր ցանկալի երեսը ցըցուց . . . կարկամեցայ . . . : Ո՞վ կարող է նկարագրել այն բուռն և խոր յուզմունքն որ տիրեց իմ հոգեկան և մարմնական բովանդակ մասանց վերայ։ Ո՞վ իմ պաշտելի Շնորհալւոյս տուած ու առած, օրհնուած ու օրհնած, աղօթած ու երգած տեղի, տեսարան ու հանդիսարան . . . : Այժմ կ՚զգամ թէ մարդ ո՞ր աստիճան յափշտակութեան մէջ կրգտնուի, երբ իւր ամենէն աւելի սիրածին հանդիպի։ Քարերու գլուխը քարացած մնացեր եմ, և ապա գետինը թաւալեցայ երեսացս վերայ, կըփարիմ, կըգրկեմ, կըպագիմ, կ՚սթափիմ, և,

այլ աչերս չվերցուցի երկինք։ Երկնքէն բարձր փառք մը գտած էի։ «Աչքս 'ի ծովն, միշտ 'ի ծովն, շեշտ 'ի ծովն»։

«Ծո՛վ, դու էր չես ծիծաղեր»։

«Ոտներ կ'որոնեմ իւր մէջ՝ չցուցընէր. հարցուփներ կ'ընեմ իրեն՝ չպատասխաներ։ Իւր ափանց ալիքներ՝ որ կը ծփծփան առանց հողմակոծութեան և առանց փոթորկի, նշան է թէ փոթորիկը զանի այնքան վեր ու վայր յուզած է, որոյ կուրծքը ուռչած է ծոցոյն խորերը կոծով լի, նման թշուառ դշխոյի մը, որոյ գլուխն ու դէմքը փայլուն երևի ադամանդներով, ոսկեհուռ ձեղինակներով, բազմեալ բարձրաշուք փղոսկրէ գահոյից վրայ, արտաքուստ երևոյթ երանելի և նախանձելի, բայց շարունակ արտասուին իւր աչերը, ցաւն ու կսկիծը կրծէ ներսէն անոր սիրտն, լայ ու հեծեծէ, քանզի կորուսած է նա իւր երկու աչաց լոյս երկու զաւակները, երկուքն ալ թագակիր գլուխներ, մին փառք եկեղեցւոյ, միւսն փառք դիւցազնութեան։ Ծովիկն աչքի ձև ունի, կոյսի մը աչքին պիտի ըսէի, բայց ալ ձիշդ՝ մանկամարդ այրուոյ մը կը նմանէր, խորհրդաւոր գեղեցկութեամբ և շնորհքով զեղուն ականոցի մը, զոր արտասուքն աւելի հրապուրիչ կը գործեն, լերանց շրջանակի մը մէջ ամփոփուած, և ինչպէս սև ոսպ մը՝ աչքին բիրը, այնպէս կը մնայ և կ'երևայ սև ու քայքայուած շէնք մը այս ծովուն մէջ, կղզեակ—դղեակին վերայ Ս. Նշանի տաճարին աւերակն։ Ո՜ աւերակ, որ քան զերկինս բարձր ես և մեծավայելուչ իմ սրտիս համար... ։ Գիշերը անքուն անցուցինք, արշալուսին նաւ նստեցանք կղզին երթալու. աւա՜ղ աչերուս, սև ու սպիտակ քարեր ցիր ու ցան՝ խարխլեալ ոտմունք և եթ կան։

«Համբո՜ր քարերուն, համբո՜ր հողերուն, համբո՜ր փլատակաց վրայ բուսած խոտերուն։ Եւ յօդն՝ Հայաստանի հոգւոյն արցունքն, որ ամեն առաւօտ կ'ինչնէր շարախել կղզեկիս փոշիներ քարերու խիճերէն ծլած թուփերը, լեցի, կրծեցի, ճաշակեցի, իմ ալ ցօղերս թափելով հոն։ «Դեռ 50 տարի յառաջ ասա կը բնակէինք Ծովեցի Հայքս, և նախ թերակղզի էր մեզմէ շատերը այս աւազանը մկրտուած են» ևայլն. կըսէին իմ նաւիչներս։ Լուսատիպ մը պէտք էր ձիշդ այս պահուս, սոյն Աստ-

տուածաքնակ աւերակին և Աստուածարեալ Ծովկին տխուր ու վսեմ տեսիլն տպէր, պատկեր՝ զոր աւելի կրկենդանացնէր արևուն ծագման քնքոյշ ճառագայթն և լերանց ու ծառոց ստուերները կրկախէր երկնափայլ Ծովուս բիւրեղեայ ծոցոյն մէջ. այս պահուս՝ երբ ձկունք երամով կրկայտառէին, երբ թռչունք թեռ թեռ կթռէին։ Բայց ինչու ամենքն ալ անձայն էին։ Վա՜հ, երբ լռեր էր Ներսէսին քնարը «Զարթիք փառք իմ» երգելէն, զոր կընուագէր Զուարթն հոգւով «Ընդ զուարթունս նոր երգս առեալ Նորոգողին», և կրկրկնէին այս թեւաւոր ալախսոսիկ տիրացուք «Ալէլուիա՛», այն օրէն ալ լռած էին թռչնոցս դայլայլեկք։

«Ո՞վ կրնայ բաժնուել ձեզնէ, ափ ու աւեր Ս. Նշանայ։ Ո՞վ կրնայ թողուլ զձեզ, քարինք և ալիք Ծովկ—գլեկիս։ Արդեօք որքա՞ն պիտի ապրինք դուք կամ ես, տա՞ր ինձ երկինք այն երջանիկ առիթն կրկնելու անյագ համբոյրս և անհատ արցունքս 'ի ձեզ։

Լերինք և եթերք Ծովկիս, ձեզ, որ արձագանք տուած ու առած էք շնորհալի երգոց և մեղեդեաց Շնորհալւոյն։

Ջուրք և թռչունք, ձեզ, որ զուարթ խայտանօք ապրած ու շարժած էք երկնային Աշուղին զգացմանց քնարին հոգեղէն թելերը։

Աստեղք և արեգ, ձեզ, որ պայծառ և շքեղ ճառագայթներով ոգևորած էք պայծառ հոգին Հոգենուագին «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առիս լոյս ծագեա» գեղգեղողին։

Դեռ ցամաքը չելած, հաւք մը կրտեսնիմ, սևորակ փետուրով, բարակ վզիկով, կլորիկ գլխով, զոր ծռած էր մէկ քով, թխորակ աչերով, սպիտակ լանջով, ծնկները ծալած ջրոյն ալեաց վրայ կերթայ, սպաւորի մը կամ անգին կորուստ ունեցողի մը կընմանի, բնութեան և առաւօտեան բոլոր գեղեցկութիւնն ու զուարթութիւնը իրեն վրայ չազդէր, անփոյթ հայեացք մը կձգէ աչքի ծայրով դէպ 'ի մեզ երբեմն։ Մինակ միայնակ է ինքն բոլորովին։ Ցանկարծ ծովուն յատակը կ'իջնէ

կ'անհետանայ, խորերը կը յուղէ, և ահա ջրոյն երեսը կ'ելնէ պարապ և ունայն, մի և նոյն տխուր տիպով և դիրքով . . :

Ի՞նչ կ'որոնես, խե՛ղճ հաւուկ:

Ի՞նչ է այս թռչնոյն անունը, հարցուցի ծովացի ընկերներէս:— Պատասխանեցին. ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ է իւր անուն:

Թորո՜ աղբար, ա՛ռ նոր զարկ մը սրտիս. . . . Արդեօք որոշ անձնաւորութիւնն էր այն:

Ա՛յ Թորոս աղբար, որ կը յուղես ծովուս խորերը, կը յուղես սրտիս անդունդները: Թորո՜ աղբար, ո՛ր մէկ կորուստներդ կը խնդրես, արդեօք տաճարի՞ն եթէ դահլիճի՞ն, Լեւոնեա՞նց թէ Ներսիսեանց, Հեթումեա՞նց եթէ Գրիգորիսեանց, խոշ՞ն եթէ սաղաւարդն, խաչ՞ն եթէ դայիսոն, փետուրի՞ն եթէ պոլովատիկն, դրոշմ՞ն եթէ դրոշակն, Աստուածաբան մատեա՞ն եթէ գահոյք արքունական, Ծիրանի՞ն եթէ եմիփորոն, Վկայասիրի՞ն բուրվառն ու աղօթամատոյն եթէ Թորոսի սուրն վրիժուց . . . : Է՛յ Թորոս աղբար, թռիր ինձ հետ, թռի՛ր գքեզ տանիմ հայրենիքէն հեռացեալ Հայոց 'ի տես, 'ի յոյզ և 'ի յոյս . . . :

Բայց դու կը մերժե՞ս, չե՛ս համոզուիր, և ոչ տեղէ՛դ կը բաժնուիս:

Ա՛յո՛, դու ուզեղ ես, յուզէ, խնդրէ, որոնէ այդ տեղ. ԿՈՐՈՒՍՏԸ՝ ԿՈՐՍՈՒԱԾ ՏԵՂԸ . . . :»

«Թորոս Աղբարս գրքի նպատակի և նորա բանաստեղծական գեղեցկութեան վերայ խօսելուց յետոյ, անցնենք նորա բովանդակութեան:

Ա. Ամենից առաջ Արժ. Ճանապարհորդի այցելութեան տեղը եղել է ՍԱՄՍՈՆ քաղաքը՝ Սև Ծովի հարաւային ափի վերայ, կարևոր նաւահանգիստ, Տրապիզոնի Վիլայէթ: Քաղաքի բնակիչները մեծաւ մասամբ Տաճիկներ են, և 150 տան չափ վաճառական Հայք: Այդ քաղաքը գտնուելով իբրև կապ Ասիոյ և Եւրոպայի միջոցը, յարաբերութիւն ունի Եւրոպայի, Կ. Պոլսոյ և Ռուսաստանի հետ. փոխադրող վաճառականութեան կարևոր տեղ է, և ցորենի առուտուրը յաջող: Շրջակայ տեղե-

րից և ես բերում են բերքեր, մասնաւորապէս մեծ քանակութեամբ ծխախոտ, որ անուանի է և շատ տարածուած։

Սամսոնի մէջ կայ 1 Հայոց եկեղեցի, 2 վարժարան. ուսանողներ՝ տղայք 56, աղջկունք 36։ Վարժարանների ծախքը 25000 ղուրուշ եկեղեցուց, դրամագլխոց տոկոսից և հանգանակութիւնից։ Թիւ Հայոց 649. Կաթոլիկ և Բողոքական Հայք 111։

Զընայելով, որ Սամսոնի հայք աղքատ չեն, այսու ամենայնիւ վարժարանները վատ դրութեան մէջ են, որովհետև գլուխ դնող չունին, հասկացող մարդ չըկայ։ Սամսոնի պէս ծովափնեայ ծաղկեալ քաղաքի մէջ պէտք է որ Հայոց եկեղեցին պայծառ, վարժարանը պայծառ, ընկերութիւնք և թանգարան պայծառ լինին, իբրև ներկայացուցիչ Հայաստանցի Հայոց, որոց դուռն կըհամարուի իւր դիրքով։

Բ. ՊԱՖՐԱՅ քաղաքը գտնուում է Ալիս գետի վերայ, որ թափուում է Սև ծովը։ Սորա հողը շատ զօրաւոր է, բնակչաց հարստութիւնը կենդանիներն և ծխախոտն է։ Պաֆրայի ժողովուրդը զօրաւոր է. բայց կրթութիւնից և լուսաւորութիւնից զուրկ։ Յոյները երկսեռ դպրոցներ ունին, և քիչ շատ հոգս են տանում. Հայերն և Տաճիկները կրթութեամբ միմեանցից չեն զանազանուում։ Ահա դպրոցի նկարագրութիւնը. «Տեղ ոյս դըպրոցին վիճակը խեղճ դատայ, գծուած տեղ մը, լայն շաւվարով և բոկոտն դասատուի մը քով՝ աղտոտ տախտակամածի վերայ ծնքաչոք շարուած հարիւրի մօտ երկու սեռէ խառն աշակերտներ նոյնպէս աղտոտ վարտիքներով, բոկոտն և գլխիբաց, դէմքերնին և ոտքերնին կարծես տարիներէ ի վեր ջուր չտեսած. ասոնց ողորմելի վիճակը մեր ազգի ներկայութիւնը միտքս բերաւ, և արցունքներ աչկունքս կոխեցին։

«Դպրոցին մէջը հասարակ ինթերցումէ և գրէ գատ՝ ուրիշ ուսմունք չկայ. ասկէ առաջ մի քանի դասատուներ գացած են հոն, բայց ոչ հետք մը ձգած են անդ. Պաֆրայի պէս անմշակ և անհոգ թողուած տեղ մը չէի տեսած բնաւ»։

Վրաղաքն ունի Հայոց եկեղեցի 1։ Վարժարան 1, որի ծախքը եկեղեցուցն է— 10000 ղուրուշ։ Թիւ Հայոց 794։ Ու-

սանողներ՝ տղայք 81, աղջկունք 17։ Բողոք. և Կաթոլիկ Հայք 27։ Մաղագործ Հայք՝ 290։

Գ. ՍԻՆՈՊ քաղաքը (Սև ծովի վերայ) ունի 1 Հայոց աւերակ եկեղեցի։ Հայոց թիւը 17։

Սինոպի մօտ կան Խույլուշի գիւղերը, որոնք ունին 2 եկեղեցի, 2 ծաղկոց։ Ուսանողները 60 տղայք։ Վարժ. ծախք 1200 ղուրուշ հանգանակութեամբ։ Թիւ Հայոց 712։

Դ. ՄԱՐԶՈՒԱՆ քաղաքը երևելի է իւր այգեստաններով, մշակուած դաշտի արտերով և կանանչներով. օդը շատ առողջարար, ջերն առատ և սառն։ Առուտուրը յաջողակ (ամեն տան մէջ մանիսա են գործում)։ Տեղական պիտոյից համար ամեն տեսակ արուեստներ կան քաղաքի մէջ. աւելի նշանաւոր է պղնձագործաց արուեստը։ Բոլոր արուեստաւորք Հայեր են։ Մարզուանցիք հանում են նոյնպէս շատ առատ գինի, միայն իւրեանց գործածութեան համար։ Բնակչաց կենցաղավարութիւնը ասիական է. կանայք պինդ պինդ փաթաթուած են գլխից մինչև ոտքը։ Տեղով ու շէնքով նշանաւոր է Հայոց եկեղեցին և վարժարանը, վերջինս արևելեան կողմը մի պարտէզ ունի։ Աւելի նշանաւոր է Ամերիկայի միսիոնարաց նոր շինել տուած Աստուածաբանութեան՝ և աղջկանց վարժարանները, ուսման և բարեկարգութեան մասին համբաւոր։ Կայ և մի տաճար ու վարժարան Կաթոլիկ Հայոց։

«Իմ տեսած աղջկանց վարժարանն, գրում է Հայր Սրուանձտեանցը, արգելանոց մի էր եկեղեցւոյ դրան հանդէպ, հին և անկանոն շէնք մը, որոյ ներքին յարկին մէջը 15-ի չափ խիստ փոքրիկ աղջկունք և մանկունք խառն, քերական, հեգարան կ'ընթեռնուին. այր մարդ վարժապետ. ոտքը բոբիկ, փայտ 'ի ձեռին, ֆալախանը մէջ տեղը։ Այս՝ իրեն պատրաստեալ վիճակն էր, որուն իմաց տրուած էր կանխաւ մեր այցելութիւնը։ Մանկանց մեծ վարժարանի նախասրահներու մէջն ալ փայտ և ֆալախայ տեսայ, և այսուհետև գրելիքս ամեն տեղերու վարժարանները թէ գրեմ թէ չգրեմ, պէտք է գիտնալ թէ այս տանջարանները կան ու կան, և ամեն տեղ կ'ստիպուէի ծանր դիտողութիւն ընել վարժապետաց թէ՝ ի՛նչպէս փայտով դաս-

տիարակեալ մանուկն մարդ չէր լինիր, և թէ՝ ի՞նչ էր իրաք կրթութիւն տալու կերպն։ Իսկ վարժապետնե՞րը ով կրթեր։

«Հասարակ ընթերցանութեան դասագրքերը խառն ի խուռն էին. մէկը՝ գրաբառ աւետարան, միւսը՝ բողոքականաց աշխարհաբառ աւետարան, սա՝ հին աշխարհագրութիւն մը, նա՝ գրաբառ Ս. Գրոց պատմութիւն մը, և այլն։ Աշակերտքը դասընկեր ընելու և ընթերցարանները մի օրինակութեան վերածելու դիտողութիւններ ըրի, զոր ընդունեց հոգաբարձութիւնը և յուսացուց գործադրել . . . ։ Այս մեծ՝ այլ խեղճ վարժարանը ի՞նչ անցեալներ ունեցեր էր . . . ։

«Հայոց ազգ, քեզ երկու թև պիտոյ է ազատութեան բարձունքը թռչելու բարձրանալու համար. ՎԱՐԴԱՊԵՏ և ՎԱՐԺԱՊԵՏ՝ մեծերը առաջնորդելու, մանուկները դաստիարակելու . . . ։ Ամեն տեղի համար այս երկու պակասը կար . . . ։

«Եկեղեցւոյ և վարժարանին յատկացեալ կալուածները՝ որոց մեծագոյն մասն ներկայ Թաղ. Խորհրդոյ գովելի ջանից արդիւնքն է, հետևեալներն են. 16 խանութ կազմեալ պէղէստուն մը և 28 այլ խանութ և 3 տուն Մարզուանի մէջ, ու խան մը Ղավզայի մէջ։

«Դիտողութիւն պէտք է ընել, որ սոյն կալուածներուն՝ ազգային անհատներէն ոմանց անուան վերայ կալուածագիր շինուած են, և ասոնք՝ ապահովագիր անգամ տուած չեն ազգին, թէև իրենք լինին հաւատարիմ անձինք։ Այս կերպին շատ տեղեր հանդիպեցայ։ Պատրիարքարանի Տնտես. Խորհրդոյ գործն է կարծեմ ապահովել Ազգային սեպհականութիւնները։— Ծախք վարժարանի 22620 ղուրուշ։ Ուսանողք 328 մանկունք, 30 աղջկունք. (թիւ Հայոց 6496, որոնցից 481 Մաղագործ (բոշա) են, և 481 բողոքական ու կաթոլիկ)։

«Ընկերութիւն մի ևս կար Հայ տիկնայց, Ագապեան անունով, որոց պարագլուխն էր տիկին Մ. Պարսամեան, քանի մը տարիէ 'ի վեր կազմեալ և բաւական գումար պատրաստած, որոց նպատակն էր Պոլսէն ձեռագործի և ուսմանց հմուտ վարժուհի մը հրաւիրել և աղջկանց վարժարան մը բանալ։ Ուրախ

եմ ասելու, թէ վերադարձիս տեղեկացայ որ տարեր և սկեր են։ Ահա արժանի գովութեան գործ և գործողք»։

Մարզուանու Հայաբնակ ինն աւաններից և գիւղերից վեցը ունին ուսումնարաններ. 1) Սեմ— Հաճի գիւղ. աւան. ունի 2 վարժարան— Պարթևեան և Հռիփսիմեան, որոց ծախքն է 4000 ղուրուշ։ Ուսանողներ՝ 160 մանկունք, 60 աղջկունք։ (Թիւ Հայոց 2317, որոնցից 62 բողոքական են։ Թուրքերը— 6765)։

2) Ընկլաթ Հաճի գիւղ. Աւան։ Ունի 1 վարժարան, որի ծախքն է 1000 ղուրուշ։ Ուսանողներ՝ 10 մանկունք, 5 աղջկունք։ (Թիւ Հայոց 197, որոնցից 80 բողոքական են։ Թուրքերը— 800)։

3) Եէնիճէ գիւղ.— 1 վարժարան, ծախքը՝ 1000 ղուրուշ։ Ուսանողները՝ 15 մանկունք, 8 աղջկունք։ (Թիւ Հայոց 116)։

4) Լիճ գիւղ.— 1 վարժարան, ծախքը 800 ղուրուշ։ Ուսանողներ 12 մանկունք, 8 աղջկ. (Թիւ Հայոց 92, որոնցից 10 բողոքական են։ Թուրքերը— 71)։

5) Լաւնէ գիւղ.— 1 վարժարան, ծախքը 800 ղուրուշ։ Ուսանողներ՝ 18 մանկ., 7 աղջկ.։ (Թիւ Հայոց 180։ Թուրքերը 1200)։

6) Վերէր Քէօրէ- Աւան։— Ունի 1 վարժարան Ս. Սահակեան, որի ծախքն է 2000 ղուրուշ։ Ուսանողներն են 50 մանկունք։ (Թիւ Հայոց 1280, որոնցից 125 բողոքական են, և 280 Մաղադրծներ։ Կան նոյնպէս բաւականին Ցոյներ և շատ Թուրքեր։)

Ն Ամասիա քաղաքը, Իրիս գետի վերայ, մի վաճառաշահ քաղաք է. գաւառէն ուղարկում է զանազան տեսակ բերքեր Եւրոպա, Պոլիս և Թուրքիոյ այլ և այլ գաւառները։ Կը գտնուին նոյնպէս տեղական պիտոյից համար ամեն արհեստներ. արհեստաւորները Հայեր են։— Այդ կողմերի օդը բարեխառն է, միայն Ամասիա քաղաքը խոր ձորամէջ լինելով, ամառը սաստիկ շոգ է անում և յաճախ տենդի հիւանդութիւն։ Քաղաքի բնակիչներից՝ կանայք աշխատասէր են. դոցա զբաղումներն են շերամ սնուցանել, բժոժէ թել հանել, մանիսա և

այլ տարազներ գործել, տուն և այգի տնտեսել. ժիր են և առողջ։ Իսկ արք՝ դանդաղ և մեղկ, կերուխումի և զուարճութիւնների սիրողներ։

Քաղաքի մէջ կան երեք Հայոց եկեղեցի. իւրաքանչիւրի բակի մէջն է թաղի մանկտւոյն համար երկսեռ ծաղկոց, իսկ շէնքով և դաստիարակութեան մասին շատ ողորմելի։ Քաղաքի Սավայիդի ասուած թաղեցիք ունին, ինչպէս պատմում է Հայր Սրուանձտեանցը, մի մանաւոր վարժապետ Բենկանցի պ. Աստուածատուր, ուսեալ և բարեկիրթ անձն, որին յանձնած են միայն քառասուն աշակերտ, և սովորեցնում է Հայերէն, գաղղերէն, տաճկերէն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, և ձայնաւորութիւն։ Իսկ մնացեալները լցուած են ծաղկոցների մէջ, ուր սովորում են Քերականից մինչև Գործոց, հալիւ գիր գրել իմացող կըտեսնես դոցա մէջ. վարժապետները անպէտ իւրեանց պաշտօնին և անկիրթ։ «Կըշառաչեն ֆալախաներ, տղոց՝ ախ ու եամա՛ն գոռալէն կըթնդան շէնքի քարն ու փայտը, այլ չազդուիր անգութ վարժապետին սիրտ. խրոխտաբար պոռոտալ, դողացնել ու սարսեցնել մանուկն իւր խոժոր հայեցուածքով, և գալարուն վարոցը ձեռքին մէջ ճօճեցնելով. ահա վարժապետներ, ահա աշակերտելոց մարզութեան կանոններ։ Զգուած այն սիրուն ծաղկունք այս խամրեցուցիչ ձեռաց և խելաց տակ, ապականեալ օդերու մէջ, խոնաւ հողերու վերայ, փայտի կտորներու վերայ, որք իրրև նստարան շինուած են, առանց գրասեղանի, շէնքեր առանց լուսոյ և առանց օդի, գիրքերը կտրտուած. և ամեն մէկի ձեռքը զատ զատ. տեսակ գիրք։ Այս ազգային յոյսոյ անյոյս յարկերը այցելածս միջոցին Ս. Աստուածածին եկեղեցւոյ դրան քով փոքրիկ աղջկանց վարժարան մը ևս ցոյց տուին, որոյ դրան առջև այլանդակ դէմքով, խառնած մազերով, բորիկ, պատժափայտն 'ի ձեռին սիպտակ մազերով մէկը կելած կերևար։ Քահանայ է, ըսին և աղջկանց վարժապետ, որ և ոչ քահանայ, և ոչ մարդ կընմանէր այլ սակայն ստոյգ, աղջկանց վարժապետն էր նա։ Ողջունեցի զինքն. — Օրհնեա տէր, վարժապե՞տ է.— Ի՞նչ պիտի ընեմ, լաւի չունիմ, պատասխանեց։— Հրամէ երթանք վարժարանդ

այցելենք.— Ի՞նչ կըփնտռես, կարգս վկայ, ոչ բախի կայ, ոչ մազէ . . . : Սատիկ գրգռուեցայ ասոր կոպտութեան վրայ, և այն ինչ այցելակցացս մեղանդրանք կ'ընէի, ինձ պատասխանեցին թէ, ձիշդ կ'ըսէ, այս տերտէր վարժարան բացած է. մէն մի աշակերտուհիէն շաբաթական տասն փարայ թոշակ կառնու և առածը օղիի կուտայ, ամեն օր կըխմէ:— Է, աս ե՞ղաւ:— Վշտացեալ է:— Ի՞նչ է վիշտը:— Լադիկ գիւղին վրայ ձեռնադրուած էր, գեղացիք չուզեցին, հոս ալ քահանայք բաժին չեն տար անոր:— Պատճառը.— վասն զի տգէտ է և գինով: Ուրեմն ապրեցնելու համար վարժապե՞տ պէտք էր ընել . . . :

«Ա՜հ, Հայեր, ա՜հ, հայրեր ու մայրեր, ինչո՞ւ դուք ձեր ոտքով կըզարնէք ազգային յառաջադիմութիւնը և յետս կը ընկրկէք: «Ազգի պաշտօնեայ են, վարժարան դնենք շահուին». դեռ Պօլսոյ մէջ ալ այս բանը կայ:

«Միւս ծաղկոցներու վարժապետներն ալ իւրաքանչիւր աշակերտներէն շաբաթական 10—20 փարա թոշակ ստանալով և աշակերտները բրածեծ ընելով իրենք գոհ և ծնողք գոհ կ'ընեն. ըսել է մէկ տղայ տարին 12 դահեկան վճարելով, և քանիներն ալ 24 դահեկան, կսպասեն մարդ լինին: Վարժապետներէն ոմանք եկեղեցական ձայնաւորութիւն ալ դաս տալու համար եկեղեցին քանի մը դահեկան նպաստ կուտայ: Ամենէն բարձրագոյն վարժապետ տարին 2000 ղուրուշ կ'ստանար, և այն պ. Աստուածատուր Բենկանցիի պէս ուսուցիչ մը, բայց երբէք օգնական մը չունենալով իրեն. իսկ միւս վարժապետներ տարեկան 1000— 500 —300 դահեկանով կըկենան»:

Առ հասարակ Սմասիոյ մէջ միւս ազգային գործերն ևս նոյն դրութեան մէջն են գտնուել, ինչպէս և դպրոցաց: Ազգային վիճակի այդպիսի լքեալ դրութիւնը մի առաջնորդի ընորհիւն է եղել:

Սմասիա ունի 1 ուսումնարան Ս. Ներսիսեան, 3 ծաղկոց մանկանց համար, 3 ծաղկոց աղջկանց: Վարժարանաց ծախքը 13500 ղուրուշ. Ուսանողները՝ 409 մանկունք, 108

աղջկունք։ (Թիւ Հայոց 5605։ Բողոքական և կաթոլիկ Հայք 96։— Թուրքերը 9823)։

Պէտք է այստեղ աւելացրած, որ այս տարուս սկզբին Համալսարանական անունով ընկերութիւնը բաց է անում այդտեղ Ս. Մեսրոբեան մի երկսեռ վարժարան, որոյ հաւատը և նշանակում են խնամակալներ, խնամակալուհիք և այլն։

Օ. ՉԻԼԷ քաղաք, որի դիրքը մի հովտի վրայ է, գեղեցիկ. շուրջը այգիներ և ծառաստաններ, մշակուած ընտիր անդաստաններ, այս և այն կողմերը կլոր բլրակներ։ Հայերն ու Տաճիկները գրեթէ խառն են բնակւում, փողոցները անմաքուր, տները տձև, հագուստները աղտոտ, կանայք սաստիկ փոքրաթուած, բոբիկ են մանգալի։

Օ.ԻԼԷի մէջ գտնւում են ասիական գրեթէ ամենայն տեսակ արհեստներ և արհեստաւորներ, մասնաւորապէս խաղաքորդութիւնը (դաբաղ), որ Տաճկաց ձեռքն է։ Ծաղկեալ է նաև բամբակից սպիտակ կտաւ գործելը, որ ընտիր է ու դիմացկուն։ Այսպէս նաև մանիսա, և այծի մազից ու կանեփից չուաններ, և այլ նիւթեր, որոնցով շատ շահւում են բնակիչները։

Օ.ԻԼԷի մէջ կայ մէկ Հայոց վարժարան (Ս. Մեսրոբեան), որի ծախքը հասնում է մինչև 3400 ղուրուշի եկեղեցուց։ Ուսանողները 200 մանկունք։ (Թիւ Հայոց 2012, որոց 12 բողոքականներ և 93 մաղադրիներ։— Թուրքերը 16688)։

«Զիլէի Հայք, գրում է Հայր Սրուանձտեանցը, արտասուաց արժանի վիճակ մը ունէին. 200 աշակերտներ կ'երթևեկէին վարժարանը, ուր հասարակ ընթերցանութիւն և գրել կը սովորէին, սակայն առանց երբէք հայերէն խօսելու և առանց հասկանալու. տեղական տիրացու մի էր իրենց վարժապետ՝ Թրքախօս, և իրենց ծնողք Թրքախօս։ Բոլոր քաղաքի մէջ երկու քահանայք կային Հայերէն հասկացող։ Կայտառ մանկունք և տիրացուք շատ կանոնաւորութեամբ կ'երգէին եկեղեցին ու կ'ընթեռնուին ընթերցուածները անսխալ, իբրև մեքենայ, կամ իբրև դծնծղայս որ ղօղանջեն։ Կարի ջերմեռանդ իրենց պահքին և օրէնքին. բայց քրիստոնէութեան բուն հոգին, և անոր

պտուղ՝ գործք, չունէին։ Մի և նոյն ժամանակ կարի ջեռմեռանդ էին օղիին. և խաբէութիւնը խոհեմութեան փոխանակ ունէին։ Չիս ալ քանի մը բաներու մէջ խաբեցին . . . ։»

Ի. ԹՕՔԱԴ քաղաքը գտնուում է Իրիս գետի մօտ, ճնշուած լեռներու և ժայռերու մէջ. անտանելի է արևի տաքն ու տապը։ Քաղաքի մէջ առատ են ջրերը. փողոցները լայն ու նեղ, մաքուր ու անմաքուր, հարթ և ելևէջ. շէնքերը հում աղիւսով են, բայց 'ի ներքուստ շքեղ. կահ կարասիքը և զգեստների ձևերը պերճ ասիական. խիստ սակաւ է եւրոպականը։

Արուեստները այստեղ ծաղկեալ դրութեան մէջն են գըտնուում. ամենից նշանաւոր արուեստն է պղնձագործութիւնը։ Արուեստաւորք Հայեր են։

Թօքադու մէջ եօթն եկեղեցիներ կան Հայոց, պայծառ շինուածով, և ճոխ զգեստներով. մի քանիսը աւելի հարուստ են դրամագլխով և եկամուտներով։ Տեղւոյն առաջնորդի անհոգութեան և տգիտութեան շնորհիւ ազգային գործերը երեսի վրայ ընկած են։ Ցաւալի է ուսումնարանաց դրութիւնը։ Ահա ինչպէս է դոցա նկարագրում արժ. ճանապարհորդը.

«Ընտարակոյս ամեն բանէ յառաջ վարժարաններն էին մեր տեսութեան փափագ և ուշադրութիւնը գրաւող. ո՞վ կըընայ պատմել զգացած ցաւս, երբ իմացայ թէ վարժապետաց թոշակ վճարուելուն համար ցրուած էին ուսանողք և ուսուցիչք։ Երբ մեր յաճախակի խնդրանաց վրայ, հաղիւ արժանի եղանք Քաղաքական ժողովոյ Ատենապետ Էֆէնտիին երեսը տեսնելու. և երբ յուզեալ կը խօսէինք վարժարանաց վիճակին վրայ, 'ի կարգս շատ մը պատճառաբանութեանց, Ատենապետ Էֆէնտին 'ի ներկայութեան Ս. Առաջնորդին համարձակեցաւ ինձ ըսելու թէ՝ Վարժարանները անաստուածութեան տներ են եւայլն։ Այս Էֆէնտին մի և նոյն ժամանակ կըպատմէր թէ՝ Ինքն ներհուն է մոգական գիտութեանց, վեցհազարեակի վարպետ և Դաւիթ Անյաղթի անունով՝ Ա. Բ. Գ.-ի թուահամարով կը թափանձէր ամեն գաղտնեաց՝ յերկինս և յերկրի և ի սիրտ մարդոյ . . . և այլն և այլն։ Երանի՞ այդ քաղաքին . . . »

«Թէպէտ եկեղեցեաց բակերը Ծաղկոցներ կան եղեր, բայց նշանաւոր ուսումնարանն էր Վարդանանց անունով ընդարձակ շէնքն։ Փասպանեան Գ. Եփէնտին, որ առաջին ուսուցիչն էր, և մեր գալուստը լսելով փութացեր էր իր կամաւոր տարադրութենէ, գեղերէն գալ, եռանդոտ և արժանաւոր անձն այդ պաշտօնին. Անձնուէր ընկերութեան առաջնորդութեամբ Ս. Առաջնորդն ալ միասին, Վարդանանց դռներն բացուեցան, և գնացինք թափուր սրահներու և դրասեղաններու այց առնել։ Սոյն յարկին ներքև թէ՝ իբրև ուսուցիչ և թէ իբրև Անձնիւր ընկերութեան հիմնադիր և վարիչ, շատ եռանդ և քրտինք թափեր էր քանի տարի առաջ Փօրթուգալեան Մկրտիչ Եֆ։ որոյ ճշմարիտ անձնուիրութիւնը ազգի լուսաւորութեան ամեն բարեկամաց ծանօթ է. անոր հոս եղած ժամանակ Թօքադնախանձելի քայլեր առեր է ազգային ոգւոյն և ժամանակի յառաջադիմութեան. բայց չար նախանձու դևը դրդեր է քաղաքիս ոսկիով զօրաւոր անձինք. բանը հոն հասեր էր, մինչև Փորթուգալեանը կապանօք ի Սեւաստ տարուած էր, ամբաստանուելով թէ՝ Հայոց թագաւորութիւնը վերականգնելու ջանքեր կ՚ընէ սա . . . ։ Վալին գիտելով զամբաստանեալն և լսելով անոր վրայ դրուած քրէական եղեռն, այսպէս վճռած է. Գընացէ՛ք բաներուդ, միթէ կըկարծէք թէ այնքան դիւրին է թագաւորութիւն մը կանգնել, և այն՝ Հայոց պէս ազգի մը, այն ինչ 500 տարիէ հետէ Ալի—Օսման թագաւորութիւնը չէ կրցեր հաստատուն հիմ մը դնել իրեն։ Այսուամենայնիւ ծանր տպաւորութիւն թողած է երիտասարդաց վրայ այս սարսափելի մատնութիւնն, և մինչև ցայսօր կը զողոյին այն անձինքներէն։ Փօրթուգալեանի օրով ու ջանքով սկսուած էր նաև աղջկանց վարժարան մը, որ այժմ մարած էր։

Պէտք է աւելացրած այստեղ, որ վերջին ժամանակները մի խումբ է կազմուել Ժողովրդական—Խումբ անունով, որոյ աշխատութեամբ բացուել են թաղային դպրոցներ և մի կենտրոնական ուսումնարան, բաւական կանոնաւոր։

Դժբաղդաբար՝ պէտք է այս ևս ասել, որ եկեղեցիք ունին մեծ հարստութիւններ և եկամուտ, բայց այդ ամենը փո-

խանակ ազգի զաւակաց կրթութեան վրայ գործ դնելու, ծախսում են եկեղեցիներու աւելորդ զարդերու և պատկերները շռայլ զարդարելու վրայ։

Թոքատու մէջ վարժարաններ կան հինգ՝ երեքն մանկանց Ծաղկոց, մէկն Ծաղկոց աղջկանց, և մէկ Ուսումնարան։ Դոցա ծախքը անորոշ։ Ուսանողաց թիւը 205 մանկունք, 18 աղջկունք։ (Թիւ Հայոց 8819, որոնցից 1579 բողոքական և կաթոլիկ։ Թուրքերը— 10500)։

Թոքատու շրջակայ 20 հայաբնակ գիւղերից միայն Հերէէ Աւանը ունի վարժարան (երկու՝ Ս. Մեսրոբեան և Մարինոսեան)։ Ուսանողները՝ 80 մանկունք, 30 աղջկունք։ (Թիւ Հայոց 1126։ Թուրքերը 4702)։

Երկու խօսքով յիշենք և Նիկոպոլ քաղաքի մասին. (Սամսոնի գաւառում)։ Ունի դա մէկ վարժարան Սուրէնեան։ Ուսանողները՝ 180 մանկունք, 20 աղջկունք։ (Թիւ Հայոց 2053։ Թուրքերը— 3390)։ Նիկսարի Հայերն էլ տաճկերէն են խօսում, բայց իւրեանց ուսումնարանին բաւականին ոյժ են տալի։

Թոքատից մէկ ժամ հեռու գտնւում է Ս. Յովակիմ—Աննայի վանքը, որի մէջ շինուած է քարային տաճարը. կան նոյնպէս և ուրիշ շինութիւններ։ Տաճարի հիւսիսային կողմը վերին յարկում շինուած է մի կանոնաւոր շէնք ճեմարան կամ Վարժարան, որի մէջ սենեակները բաւականին յարմար դասարանի համար և իբրև ուսուցչին սենեակ։ Ինչպէս վարդապետների սենեակները, նոյնպէս և վարժարանը իւր գրասեղաններով ամայի էր մնացել, մէջը սոխ, սխտոր և ուրիշ չորացնելու բանջարներ էին լցուած։ Այն ինչ վանքի եկամուտն է տարեկան 11400 ղուրուշ. իսկ ծախքերը՝ մեծաւ մասամբ բոլորովին աւելորդ տեղը 24000 ղուրուշ։ Խօսք չկայ, որ վանքը պարտք էլ պէտք է ունենայ։ Ս. Յովակիմ—Աննայի վանքի անկանոն տնտեսական կառավարութեան փոխանակ բոլորովին հակառակը մենք տեսնում ենք Ս. Նշանի վանքը կամ Ս. Յովհան Ոսկեբերանը, որը մի զարմանալի և ուրախալի երևոյթ է Հայոց համար։ Այս վանքի Ս. Տաճարի և դորա բոլոր շինութեանց մէջ ու դուրս տեսնուած մաքրութիւնը, կանոնաւորութիւնը, անօթների և

կահ կարասիների առատութիւնը, նորա նիւթական վիճակը, կարգաւորեալ թանգարանը, ծառաների, մշակների ու ուխտաւորների և վարդապետների գոհ բերանը, զարմացնում է այցելողներին, որովհետև մեր Հայաստանի վանքերից ոչ մինին չէ նմանում. բայց իսկոյն լուծւում է զարմանքդ, եթէ իմանաս թէ այս վանքի անտեսութիւնը ու տեսչութիւնը ոչ եպիսկոպոսի, ոչ վարդապետի, ոչ քահանայի հայրն է յանձնուած, այլ մի ժրագլուխ տիկնոջ, այն է տիկին Մարիցա Գատէմեանին (դուստր հանգուցեալ Յովսկիմ Ալանեանի), որը իբրև հոգաբարձու և խնամակալ կառավարում է։

Դրամական եկամուտն է վանքին տարեկան 36—40000 ղուրուշ. բացի վանքին մէջ մխուած ուտելիքներից ծախքն է 24000 ղուրուշ։ Մարիցա տիկնոջ հոգատարութեան շնորհիւն է, որ այս վանքը դրամ է սկսել աւելացնել, նոր նոր արտեր գնել, վանքի շինութեանց և նիւթեղէնների մեծ մասը նորոգել և այժմ մտադիր է մի գիշերօթիկ վարժարան էլ բանալ։

Արդարև Մարիցա տիկինն իւր հանճարով, ազնիւ հոգւով և լուրջ ու անձնուէր ջանքով մի դերազանց պարգև է Նախախնամութիւնից Թոքատու ազգայնոց համար, և պարծանք իւր սեռին ու տոհմին. մեծ հոգս էր տանում նաև իւր հայրենակիցների անտարբեր կեանքի վերայ. ոչ միայն մի եպիսկոպոսի պէս քարոզում էր, համոզում էր, այլ և եպիսկոպոսի հետ ազդու խօսում էր, նորան պարտքերը ու անելիքները յիշեցնելով. մեծ յոյս ունէր՝ կրկնելով կրկնելով մինչև որ ամաչացնէր և յաջողէր մանկանց վարժարանի հետ աղջկանց էլ մի վարժարան բանալ։ Տիկին Մարիցայ մի պատկառելի և ակնածելի դիրք ունէր բոլոր քաղաքացի Ազգայնոց և Թուրքաց, և նոյն իսկ կառավարութեան առաջը։

Ը. ՍԵԻԱՍ քաղաքը գտնւում է Ալիս գետի վերայ (Գըզըլ ըրմագ). ունի անշուք տեսք, շինուած հովտի մէջ, անծառ և անայգի աղտոտ փողոցներով։ Երկրի գլխաւոր բերքերից են ցորեն, գարի, գաղի խէժ, տորոն, սալէպ, աղուեսէնի, սամոյր, գայլենի, այծու և ոչխարի բուրդ և մորթ էլ էլ։ Լաւ կարպետներ և Քուրդի գորգեր (խալէ) են շինում։ Հանքեր

կան գաջի, բորակի, ընտիր մարմարի, կարմիր և սպիտակ քարակաւ լայլն. ունի նաև երկու ջերմուկ տաք և սառը հանքաջուր, ուր յաճախ գնում են Սեւաստացիք թէ առողջութեան և թէ զուարճութեան համար։

Երկրի հողերը մեծաւ մասամբ Թուրքերի սեպհականութիւն են, թափուր եղած։ Գիւղերի մէջ երկրագործութիւնը շատ ծաղկած է, և բնակիչները առոյգ, հսկայ և աշխատասէր, չը նայելով, որ միշտ ծանր ծանր զրկանքների և հարստահարութիւնների ենթակայ են լինում Չերքէզներից, Քուրդերից, աւազակներից, քաղաքային Թուրք զօրքերից, մէկ խօսքով տեղական կառավարութեան անհոգութիւնից և անտարբերութիւնից։

Քաղաքի մէջ կան հինգ Հայոց եկեղեցի։ Վարժարաններն են՝ 1 ուսումնարան, 8 ծաղկոց տղայոց համար և երեք վարժարան աղջկանց։ Վարժարանների տարեկան ծախքն է 52000 ղուրուշ որոց 47000 ղուրուշը Սենեքերիմեան ընկերութիւնն է հոգ տանում երկու խաներու արդիւնքներով և ընկերաց բաժանորդագնով. մնացեալը մի մասնաւոր ընկերութիւնից, Ս. Մինաս եկեղեցուց, և մի մասը աշակերտներից։ Զարմանալի է տեսնել Սեւաստի Հայոց մանկանց բազմաթուութիւնը. Աստուծոյ «Աճեցէք և բազմացարուք» օրհնութեամբ խիտ խիտ, կայտառ, կարմիր, սիրուն, սփռուած են վարժարանների բակը, սրահն ու սենեակները, իբրև ծաղկունք 'ի մարգ։ Ուսանողաց թիւը 1422 մանկունք. 494 աղջկունք։ (Թիւ Հայոց 13200։ Կաթոլիկ բողոքական Հայք 72, Թուրքերը 18500)։

Բացի սովորական կարևոր ուսմունքներից, կար նաև գաղղերէն և տաճկերէն լեզու. լաւ ուսուցիչների կարևորութիւն ունին. աւագ վարժապետն էր, ինչպէս պատմում է Հայր Սրուանձտեանցը, մի պարոն Թադէոս անունով, որը «Թէպէտ աչօք անտես, այլ մաքք կորովի». սա ուսուցանում էր բարձր կարգին ճարտասանութիւն, տրամաբանութիւն, գրագիտութիւն, պատմութիւն, կրօնագիտութիւն, բանաստեղծութիւն և գաղղերէն, ուսած էր նաև պարսկերէն, գիտէր քնար և ջութակ հարկանել, յանպատրաստից տաղ և խաղ հնարել, եկեղեցւոյ շարականներ և երգեր նուագել լայլն լայլն։ Սակայն պէտք է

ասած, որ այսքան առաւելութեան հետ, անպատշաճ էր այս-պիսի մէկը վարժապետութեան, պատճառը՝ կարծեմ ամենքին հասկանալի է. թէպէտ սա իւր այնքան պիտանի ջանից և աշխատութեանց արժանեաց իրաւունք ունէր ազգից իւր սնունդն ու ապրուստը ստանալու։

Միւս ուսուցիչները կարող են յառաջանալ և կատարելագործել իւրեանց պաշտօնը, եթէ լինէր մանկավարժական կամ նոր ու իրական գրութեամբ վարժարանները բարեկարգել իմացող մի տեսուչ։ Վարժարաններ նիւթական և ուսումնական հոգսը ըստանձնած է Սենեքերիմեան ընկերութիւնն և տնօրէն անունով մէկը նշանակել է իւր կողմից իբրև հսկող։— Ուսումնարանների շինութիւնները, գրասեղանները և այլն առ հասարակ շատ անյարմար են, շատ տեղ ծաղկոցներում երեխայքը բոլորովին հողի վերայ նստած են։ Այս պակասութիւնները Հայր Սրուանձտեանցը վերաբերում է ծնողաց անհոգութեանը։

Սեւաստում բաղմաթիւ են ընկերութիւնները, որոնցից մի քանիսը միայն այստեղ բերինք։

1) Սենեքերիմեան ընկերութիւն, որ Սեւաստացւոց պարծանք և շատերիս օրինակ լինելու արժանի է, մօտ 32 տարի է, որ հիմնուած է Պոլիս գտնուած պանդուխտ Սեւաստցիներից քանի անգամ դադարած և նորից սկսած, վերջին անգամ 1877-ին աւելի կանոնաւորել է և արդիւնաւոր վիճակի մէջ է. իւր բաժանորդների հաստատներով ուսումնարաններին օգնում է և այժմ էլ երկու խան ունի քաղաքի մէջ, երկուքն ունին 71 սենեակ կրկնայարկ, և 15 խանութ, որոնք տարին 30000 ղուրուշից աւելի վարձ են բերում, ամբողջապէս նուիրած վարժարաններին։

2) Աղջիկներ ընկերութիւն, որ առաջ աւելի համբաւ և արդիւնք է ունեցել. հասակաւորներին կիւրակէ օրերը ձրի դաս է տալի. բաւական գրեանք ունի և թանգարան։

3) Լուսաբեր ընկերութիւն, որ կարօտ ուսանողաց ուսումնական և նիւթական պէտքերն է մատակարարում։

4) Օժանդակ ընկերութիւն, որ դասագրքեր է բերել տալի

Կ. Պոլսից, աղքատներին ձրի իսկ կարողաւորներին դիւրագին բաժանում՝ ընթերցանութիւնը տարածելու նպատակաւ։

5) Համալսարանական ընկերութիւն, որ բացած ունի երկսեռ վարժարան, ուր կարևոր ուսմունքների հետ աւանդւում են նաև տաճկերէն և դաղղիերէն լեզուները և բնական գիտութեան դաս. աղջիկները սովորում են մանել և գործել գունաւոր շալ, մանիսա, երեսի սրբիչ, թաշկինակ և այլն, որոց համար յատուկ մի վարպետ կին կայ և վարժարանի մի կողմն գործարան շինած է. տղայոց համար էլ իւրեանց վերաբերեալ գործեր։ Այս ընկերութիւնը կիւրակի ցերեկներն էլ կենցաղագիտական, պատմական, արուեստական, տնտեսական և բարոյական բանախօսութիւններ է անում։

Կան այլ և այլ ընկերութիւններ ևս, որոնք բանախօսում են, դասախօսում են և այլն. վերջապէս խօսելու, լսելու և գործելու մեծ փոյթ ու եռանդ ունին Սեւաստու ազգայինք. եթէ այս ցրուած մարմինները միմեանց մօտեցնելու և օգտակար ու կարևորագոյն պէտքերը ծառայեցնելու մի առաջնորդող լինի, Սեւաստ շատ և շատ կը յառաջ դիմէ։ Պէտք չէ որ ընկերութիւնը ընկերութեան հակառակուի և միմեանց անուանարկեն. մոռանալու չէ, որ ամենայն ընկերութիւնների նպատակը ազգին շահն է այլ և այլ ճանապարհով. բանն այն է՝ միմեանց համոզել թէ ո՞ր միջոցն է առաջին և շինարար, ու միացնել իւրեանց զօրութիւնը՝ այն զօրութեանը։

Սեւաստու շրջակայ Հայաբնակ 36 գիւղերից քսան և վեցի մէջ կան ուսումնարաններ բաւականաչափ աշակերտներով։ Շատանանք այստեղ առաջ բերել դոցանից մէկը՝ այն է Դավրա գիւղը, որ ամենից մօտ է Սեւաստուն, ամենից էլ գեղեցիկն է իւր առատ ջրերով, բազմաթիւ ջաղացքներով, հովանաղարդ ուռենիներով և այլն և այլն։ Այստեղ կան կարիճ և հաստակուռ երիտասարդներ. կայտառ և քաջառոյգ են ուստերք և կանայք բոլոր բնակիչները Հայ են և մեծաւ մասամբ ջաղացպանութեամբ են զբաղում։ Ունին քարաշէն մի պայծառ եկեղեցի և մի նորաշէն վարժարան։ Ուսանողները 50 մանկունք (Թիւ Հայոց— 438)։

Այստեղ յիշելու արժանի է նոյնպէս Ս. Նշան վանքի վարժարանը, ուր մէկ տարի կը լինի, որ Առաջնորդ Ս. Հայրն 25 դիշերօթիկ աշակերտներ է հաւաքել թէմի գիւղերից և քաղաքից, որոց աւանդւում էր Հայերէն գրականութիւն, ազգային և Սրբազան պատմութիւն, կրօնք, թուագիտութիւն, տաձկերէն և երաժշտութիւն, այս աշակերտեաների կոչումն էր Վարդապետ, Քահանայ և Վարժապետ լինել:

Առ հասարակ այս վանքն իբրև մի օրինակելի վանք է նրկարագրում Հ. Սրուանձտեանցը իւր ճանապարհորդութեան մէջ: «Կանոնաւոր էր մանկանց ննջարանն և մահիճները, մաքուր ուսումնարանը, և վանքի տպեալ ու ձեռագիր մատեաններն ևս շատ խնամքով զետեղուած էին ուսումնարանի գրադարաններու մէջ. անշուշտ եթէ արժանաւոր ուսուցիչներ ևս ունենան, ասոնք պիտի պսակաւորեն Նորին Հայրութեան գովելի ջանքն և փառաւորեն բաղձացեալ նպատակն:» Եայլն:

Թ. Տիրիկ քաղաքը շրջանակաձև բարձր լեռներով պարսպած հովտի մէկ կողմն է շինած. զարդարուած է ընդարձակ ծառաստաններով, որք առատ և ընտիր միրգեր են տալիս, ջրերի առատութիւն ունի, ըստ ամենայնի վայելուչ և զուարճալի քաղաք է, եթէ անմաքրութիւններ չունենայ: Տիւրիկ իբրև մի պորտ ընկած է Տորոսի և Անտիտորոսի լեռների մէջ, մօտաւոր յարաբերութիւն ունի Մեծ Հայոց, Փոքր Հայոց և Կիլիկիոյ հետ: Տիւրիկի ոչ միայն քաղաքի մօտերը, այլ ամբողջ գաւառն ամուր լեռներ, ժայռեր, անձաւներ, քարայրներ և անհնարին կիրճեր են, որոնք յիշեցնում են մեզ անցեալ ժամանակի Հայոց ապատութեան ապաստանարաններ լինելը: Տիւրիկ Սոյ աթոռոյն թեմն է մինչև այսօր, բայց իւր Առաջնորդն Պոլսից է նշանակւում:

Ազգային վիճակը շատ անմխիթար է, մութ դաղափարներով տոգորուած և կուսակցութեան բաժանուած: Սորա պատճառն ևս մեծաւ մասամբ Առաջնորդն է եղել:

Քաղաքի մէջ չորս Հայոց վարժարան կայ, գծուծ շէնքերով և ողորմելի վիճակով. մէկ թաղի վարժարանը բոլորովին փակ. այստեղ լուսաւորութիւնը և դաստիարակութիւնը հաս-

կացնող մարդիկ չեն ունեցել։ Մէկ ժամանակ Տիւրիկցի արուեստաւորներից Պօլսոյ մէջ մի ընկերութիւն է կազմուել և կալուածներ դնել. դոցա արդիւնքից տարեկան 4000 ղուրուշ գալիս է եղել վարժարաններին. մի քանի տարի էր, որ այս գումարը դադարել է, ծնողներն էլ թոշակ չեն վճարում ձրիին սովորած լինելով. միայն Ս. Աստուածածին եկեղեցին 2000 ղուրուշ վճարում է իւր վարժարանին և մի քանի ծնողք էլ խիստ չնչին մի բան։ «Մեծ ամօթ էր այս Տիւրիկցի ազգայնոց, ասում է Հ. Սրուանձտեանցը, որոց մէջ աղքատ չկար, բայց զգացմունք արթնացնելու համար քարոզող և գործող ալ չը կար։ Թիւ ուսանող մանկանց իբր 200։ Տարեկան ծախք՝ 7500 ղուրուշ էր Կ՚ըսէին»։

«Աղքատախնամ ընկերութիւն մը կար հնուց կազմեալ և Հայրենասիրական ընկերութիւն՝ որ անգործ կեցած էր»։

Տիւրիկի շրջակայ հայաբնակ գիւղերից վեցը ունին ուսումնարաններ 40-ից մինչև 60 աշակերտներով։

Յ. Յիշելու արժանի է Բենկաց անուանեալ գիւղը, որ գտնւում է Եփրատի վերայ։ Սորա գիրքը խիստ ամուր է, մի ապաստանարան կամ ամրոց է փակած ապառաժներուն, նեղ և խոր կիրճեր ունի այս կողմն և այն կողմը։ Բենկացւոց մեծն ու փոքր զէնքեր ունին, ընտիր նժոյգներ. քաջավարժ հեծեալներ են։ Դէրսիմի Քրդերը այս կողմերի Հայ ու Թուրք գիւղացիներից տուրք են առնում, կողոպտում, սպանում և այլն. միմիայն Բենկացիք իւրեանց քաջութեամբ ոչ միայն ազատ են ապրում, այլ և սարսափեցնում են Քրդերին. դեռ մի Քուրդ ոտք կոխած չէ Բենկայ։ Մէկ խօսքով՝ Բենկացի Հայերը՝ հարուստ, քաղաքակիրթ և քաջարի են, և եթէ միմեանց հետ միութիւն պահեն, իրար սիրեն ու յարգեն, անհամեմատ են բոլոր Հայաստանի Հայոց մէջ, որոց օրինակ էլ կարող են լինել։ Ունին երեք եկեղեցի, երկու վարժարան. Մեսրոբեան և Նունեան։ Ուսանողներ՝ 120 մանկունք, 60 աղջկունք։

ԺԱ. Ակն կամ Ակնաց քաղաք. գտնւում է Եփրատի վերայ։ Սորա առևտուրն էլ, երկրագործութիւնն էլ անկեալ դրութեան մէջն է շնորհիւ տէրութեան գօնսօլիտի, փոխառի-

նութեան թղթերի։ Ակնայ յետին Հայն անդամ իր ունեցածը գոնաղիտի, բաղդի թղթին էր փոխարինած և ամենին յայտնի է թէ այս բաղդն ի՞նչ դժբաղդութիւններ բերաւ դորան յոյս դնողներին. եկեղեցիների և ուսումնարանների գումարներն էլ մի և նոյն հեղեղը տարել էր։ Ակնցին սորանից սարսափած դընում է զանազան կողմեր աշխատելու, բայց չէ գաղթում, նա նորից յետ է դառնում իւր հայրենիքը, որովհետև նա շատ է սիրում իւր Ակն, նորա ջուրն ու օդը։— Սորա դիրքն ևս ամուր, անմերձենալի և անառիկ քարերին ապաստանած, չորս կողմն էլ բարձր լեռներ են։

Ակնայ քաղաքը մէկ ծաղկոց ունի և մէկ ուսումնարան, Ակնեցիք շատ սէր ունին դէպի իւրեանց ուսումնարանները, յոյս կայ որ շուտով աղջկանց դպրոց էլ բանան։

Ակնայ մօտ գտնւում են հետևեալ ուշադրութեան արժանի գիւղեր. 1) Ապո-էջէ, որի դպրոցը խարխալուած և յետին աստիճան անկարգ, չընայելով որ այս գիւղը ու սորա վարժարանը առաջ լաւ համբաւ է ունեցել իւրեանց գրատնով և գրքերով։ 2) Կամրիպ, ունի երկսեռ վարժարան, լաւ ուսուցիչներ, ապահով եկամուտներ, յառաջադէմ աշակերտներ, երկու ուսեալ քահանաներ։ 3) Կարո-շէյ, ունի մէկ ծաղկոց խեղճ վիճակի մէջ։ 4) Էճէ գիւղ, ունի 1 վարժարան, բայց քայքայեալ և 5) Նարվէր գիւղ— մէկ վարժարան։

Պէտք է ասած, որ գիւղերի եկեղեցիները պայծառ և հոյակապ են. տները և կենցաղավարութիւնները քաղաքացւոց պէս, ամենքն էլ պանդխտութեամբ են վաստակում, և ամենի տունն էլ շատ քիչ, գրքեր կըգտնուին. սաղմոս և Նարեկ, վառօդ և գնդակ մի և նոյն սենեակի մէջ են պահւում. տնական անօթ և զարդուց զգեստը, հրացանը և սուրը մի և նոյն պատից են կախուած։

Երեք ընկերութիւն կայ Ակնայ մէջ. Ազգասիրական, Ուսումնասիրական և Շահաբեր. ոմանց դրամագլուխները քանսօլիտ են, ոմանց ոսկի։ Գիւղերի մէջ էլ ընկերութիւններ են կազմւում և քանդւում։ Ընդհանրապէս նկատելով՝ վարժապետները պակաս չեն և արժանի են այն պաշտօնին. բայց ուսանողներ

քիչ են, ահա քաղաքի և գիւղերի ամբողջ ուսանողների թիւը՝ 762 մանկունք, 162 աղջկունք։ Եկեղեցիների և դպրոցների կալուածներից շատը Պոլսոյ մէջ են։

ԺԲ. ԱՐԱԲԿԵՐ քաղաքը գտնուում է մի փոքրիկ գետակի վերայ, որ թափուում է Եփրատի մէջ։ Քաղաքը տարածուած է և ելևէջ դիրք ունի. օդը՝ տեղ լաւ, տեղ ծանր է։ Բազմաթիւ թթենիք և այլ և այլ մրգաբեր ծառեր զարդարում են քաղաքը։ Բնակիչները բաւականին հարուստ են, բարեպաշտ և եկեղեցասէր։ Նշանաւոր են աղքատասիրութեան մէջ, և յատկապէս մի գումար էլ կայ մօտ 65000 ղուրուշ հանգանակուած աղքատներին օգնելու նպատակաւ։ Արուեստների մէջ առաջին տեղը համարուած է մանիսա գործել, որը մեծ քանակութեամբ փոխադրուում է ուրիշ քաղաքներ և վաճառուում։ Ընդհանրապէս արուեստները յառաջացնելու ջանք են անում Հայերը. գիւղերը ամենքն էլ սկսել են Եւրոպական մաղով զտել կալերի ցորենները, որ քաղաքիս մէջ է շինուում։ Ճարտարագործներ կան, որ դիւրութեամբ շինում են Եւրոպական զէնքեր, մեքենաներ և նուրբ գործիքներ։

Արաբկերի մէջ կան 10 վարժարան. մէկն ուսումնարան է Ս. Թարգմանչաց անուամբ, որի ներքևի յարկն էլ օրիորդաց վարժարանն է Զարուհեան անունով, միւսները Ծաղկոց կամ միջին կարգի վարժարաններ են, որոց մէջ սակաւաթիւ աղջիկներ ևս կան. այսքան վարժարան ունենալու պատճառը՝ թաղերի մէկ մէկուց հեռու լինելն է, բոլորն էլ մէկ Ուսումնական խորհրդի հսկողութեան տակն են։ Մի մայր վարժարան կայ, որը Ծաղկոց է, ուր 200 աշակերտներ ձրի ուսում են առնում։ Այս վարժարանը պահպանուում է պ. Կարապետ Սաղաթէլեանի տուած տարեկան 5000 ղուրուշ փողովը, որը տալու է այս գումարը քանի կենդանի է, իսկ իւր մահուանից յետոյ վարժարանը ստանալու է համաձայն նորա շինած կտակի 50000 ղուրուշ գումար։— Բոլոր վարժարանների ծախքն է տարեկան 42500 ղուրուշ։ Բացի Սաղաթէլեանի կտակից՝ 16000 ղուրուշ էլ Մայր եկեղեցին է վճարում, 3500 ղուրուշ միւս երեք եկե-

ղեցիները. մնացեալը թոշակներից։ Ուսանողաց թիւը 805 մանկունք, 80 աղջկունք։

Արաբկերի Հայ վաճառական և վաստակաւոր պանդուխտները ընկերութիւն են կազմել մի քանի տարի սորանից առաջ և դրամագլուխ ունին Հալէպ եղողները՝ 700 լիրայի, Կարին եղողները՝ 600 լիրայի (քօնսոլիտ), Պոլիս եղողները՝ 120 լիրայի (երկաթուղւոյ թուղթ), որոց նպատակը մի և նոյն էր, այն է կալուածներ կառուցանել Արաբկերի վարժարանների համար։ Արաբկերցի Պողոս էֆէնտին որ Եգիպտոսումն է բնակւում, խոստացել է մի մեծ գումար նուիրել նոր ուսումնարանի բացման, այն պայմանաւ որ ինչքան բոլոր Արաբկերցիները տային, նոյնչափ ինքն միայնակ պիտի տար։

«Վարժարանները այցելածս միջոցին, պատմում է Հայր Սրուանձտեանցը, ինչպէս նաև քանի մը բաներու վրայ ըրած դիտողութիւններս անմիջապէս ուշադրութեան առին և բարեփոխել ձեռնարկեցին, զորօրինակ՝ դասագրքերու և դասատուութեան մեթոդների մասին, և այլն։ Ուսումնական խորհուրդ, Հոգաբարձութիւն և Ուսուցիչներ խառն ժողովներ կազմեցին։ Բայց ամենէն աչքի կարնելու կէտը՝ խեղճ օրիորդաց վարժարանն էր, ցած, խոնաւ, հոտած, առանց օդոյ ներքնայարկ մի էր. համաձայն էր այս վիճակին նաև անոնց ուսման վիճակն։ Չեմ գիտեր ի՞նչ նշանակութիւն ունի կեսրոնական վարժարան ահա արդէն կայ Ս. Թարգմանչաց ուսումնարան. իսկ եթէ գիշերօթիկ վարժարան ըսել կ'ուզեն, այդ շատ աւելորդ է, մանաւանդ իւր ամենամեծ դժուարութիւններն ունի և ծանր պատահարներ նիւթական և բարոյական մասին. Տոպոյ դարձեր էր գաւառաց մէջ Կեդրոնական կամ Գիշերօթիկ վարժարանի անունը. մի և նոյնը լսեցի Խարբերդի, Բալուի և այլ Առաջնորդներէն, այն ինչ ներկայ վարժարանները բարեկարգելու մեծ պէտք ունին, որոնցով օգտակար աշակերտներ կրնան ընծայել ազգին, մանաւանդ աղջկանց դաստիարակութեան վրայ ուշադարձնելով, հոգ պէտք է տանել ընտիր ուսուցիչներ և լաւագոյն մեթոտներ հաստատել, որոց պակասութեամբն է միայն որ մեր վարժարանները անպտուղ կրմնան թէ՝ գաւառներ և թէ Պոլիս։

Արարկերի թեմի մէջ գտնուած հայաբնակ գիւղերից շատերի մէջ կան դպրոցներ 15-ից մինչև 60, 80 մանուկներ և աղջիկներ ուսանողներով։

ԺԳ. ՄԱԼԱԹԻԱ քաղաք, որ գտնուում է մի ժամ հեռու հին պատմական և անուանի Հայոց Մելիտինէից, որ այժմ կոչում են Էսքի—շէհէր, Հին—Մալաթիա։ Հին—Մալաթիայի միայն փլած պարիսպները, բուրգերը, մինարէներ, գմբէթներ, քարաշէն տներ և այլն մնացել են։ Այս քաղաքն է, որ հին դարերում Արևելեան և Արևմտեան խուժադուժ ազգերի, ժողովուրդների և իշխանութիւնների արշաւանքներն է տեսել. անուանի հանդիսացած է Ընդհանուր, Ազգային և Եկեղեցական պատմութեանց մէջ, որ շատ մարտիրոսներ ունեցած է։ Հազիւ 45—50 տարի կայ, որ բնակիչները ձգել են այս քաղաքը և գնացել մի ժամ հեռու Նոր—Մալաթիա են բնակուել, ուր առաջ իւրեանց այգեստանն ու ամարանոցն է եղել։ Սակայն հին քաղաքի դիրքն ու օդը լաւագոյն է նոր քաղաքից։

Ժողովուրդը այստեղ խաւար դրութեան մէջ է գտնուում. կրօնական և ուսումնական վիճակները մռայլ. «մի Հայ վարժապետ ունէին, պատմում է Հայր Սրուանձտեանցը, զոր Խոջայ կը կոչէին, կը դասախօսէր տաճկերէն, հայերէն, գիր, թիւ, ձայնաւորութիւն, կառավարիչ էր և անօրէն և ամենայն ինչ։ Գրագիր էր Առաջնորդարանին, և այլ ուրիշ պաշտօններ ունէր, ով կրնար դատել զինքն թէ իրաւ այսքան բանգէտ էր կամ բան մը չըգիտէր. իրեն կ'ըսէին՝ բաւական ես մեզի, դու ամեն բան գիտես, ամեն բանի կարող ես։ Երկու կամ երեք անձինք միայն կրնայ գտնել մարդ ժամանակին պահանջմանց վրայ գաղափար ունեցող. ընդհանրապէս խորին հնութեամբ կապրեն իւրենց ներքին և արտաքին կեանքով»։ «Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և հոս ապսպրեցի որ Առաջնորդարանի մէջ ազգահամարութեան տումար ունենան, և հեազհետէ ծնածն ու մեռածը նշանակեն։ Բայց միթէ ուրիշ խնդրոց տումար կամ արձանագրութիւն կա՞ր, բնաւ։ Ս. Առաջնորդն իւր ձիէն զատ բան մը չէր յիշեր, ամեն օր իւր հոգն ու խօսքը իւր ձին էր, իւր ծախած ձին, իւր առած ձին . . . : Աւա՜ղ, խոր ցաւեցաւ

հոգիս։ Մալաթիոյ Առաջնորդութիւնը Սսոյ Կաթուղիկոսութեան թեմն է։

Մալաթիա քաղաքն ունի երեք վարժարան՝ Մեսրովբեան, Նարեկեան և Արշակունեան. տարեկան ծախքը 7000 ղուրուշ եկեղեցիներից։ Ուսանողներ 400 մանկունք։

Մալաթիոյ շրջակայ հայ գիւղերից ոչ մինի մէջ չկայ դպրոց։

Մալաթիոյ մօտ գտնւում է Պէհէնի անունով քաղաքը որ ունի մի դպրոց՝ 40 աշակերտներով։ Բնակիչները մեծաւ մասամբ Թուրք։ Կաթոլիկ և բողոքական Հայեր էլ կան։— Կայ նոյնպէս Ադիեամանն քաղաք, կամ Հասան Մանսուր։ Ունի մէկ դպրոց 50 աշակերտներով։ Բնակիչները՝ Թուրք, Ասորիք, Կաթոլիկ և բողոքական Հայեր են։

Այս երկու քաղաքների շրջակայ հայաբնակ գիւղերը ոչ եկեղեցի ունին, ոչ դպրոց։ Բնակիչներն են Հայ և Քուրդ, տեղ տեղ Ասորիք և Թուրք էլ կան։

Թէ՛ Մալաթիոյ, թէ՛ Պէհէնիոյ և թէ Ադիեամանայ երկիրը մեծ մասամբ հովիտ է, որոնց միջից գետակներ են հոսում և խառնւում Եփրատ։ Երկրի պտղոյից համար կան պարզ արուեստներ։ Բերքերն են՝ ամբեռն խիստ ընտիր տեսակ, շերամի բոժոժ, տորոն, ցորեն, գարի, թիւթիւն, բամբակ, բրինձ, ընտանի և վայրի կենդանիք, ընտիր միրգեր՝ թութ, մշմշը, որ փոքր բայց համեղ ծիրան է, ցեղ ցեղ տանձեր և խնձոր, խոշարահատ խաղող և չամիչ, սալոր և այլն և այլն, որոնց չորցրած չիրերը շատ երկիրներ ծանօթ են։ Ճանապարհները խիստ բանուկ են և դիւրին, յարաբերութիւն ունին Հալէպու, Մարաշու, Իսքէնտերունի հետ. Տիգրանակերտու, Խարբերդու, Սեւասստու, Կարնոյ և շրջակայ փոքր քաղաքների հետ և իբրև պորտ է Բաղդատի և Կ. Պոլսոյ մէջ։

Մենք վերջացրինք «Թորոս Աղբար» գրքի քննութիւնը և մեր ընթերցողներին նորա հետ ծանօթութիւնը ըստ կարելոյն մանրամասն, ի՛ նկատի ունենալով որ դոցանից շատերը զրկուած կը լինին ձեռք բերելու նոյն իսկ գիրքը, թէպէտ և մեր կարծիքով մի այդպիսի հեղինակի այդպիսի աշխատութիւն ամեն

մի գրագէտ Հայի համար այսպիսի ժամանակում մի անհրաժեշտ և կարևոր գիրք պէտք է լինի նորա սեղանի վերայ։

Այս գրքի շնորհիւ մեր տեղեկութիւնները Հայաստանի վերայ հարստանում են և մեր հայեացքը լուսաւորւում։

Ընթերցողներս լաւ նկատեցին և համոզուեցան, որ Հայաստանի հողը օ՛րքան բարեբեր հող է, նորա ջրերը առատ իսկ օդը առողջարար։ Բայց դժբաղդաբար Հայաստանի որդիքը չեն կազմում իւրեանց երկրում, հայրենեաց մէջ այն ոյժը, որը մեզ ամենիս ցանկալի էր, չեն կազմում այն զօրութիւնը, որը ուղղեցոյց և առաջնորդող պէտք է լինէր միւս օտար տարրերին։ Այդ ցաւալի երևոյթի պատճառը մեզ պարզում է Հայր Սրուանձտեանցը, որի հետ մենք բոլորովին համաձայն ենք։ Արժ. Հայրը ցոյց է տալի և՝ միջոցը այդ երևոյթը հեռացնելու համար, որը մենք գտնում ենք ամենախելօք և միակը մանաւանդ այս դժբաղդ հանգամանքներում։

Փափագելի էր, ասում է նա, որ մեր դրամատէր Հայերը իւրեանց ուշքը դարձնէին Հայաստանի մէջ հողեր գնելու. այնտեղ Լորդի նման ճոխ պիտի ապրեն, Հայ մշակի պէս առողջ, և մեծ ազդեցութիւն պիտի ունենան տեղական կառավարիչների, Թուրք և Քուրդ բէյերի վերայ, իբրև օրէնսգէտ և քաղաքագէտ անձինք, և Հնդկաց մի Ռաճայի չափ հարուստ պիտի լինին հողով, բերքերով, ձիերով և բազմաթիւ անասուններով։ Թող չըսարսափին այնչափ Հայաստանից հասած չարիքներից, միթէ պակա՞ս են նոյն իսկ Եւրոպիոյ և Մայրաքաղաքների մէջ աւելի չարաչար չարիք, միթէ նոյն իսկ թագաւորները և պաշտօնակալները չեն ՁՆասւում։ Միթէ շուկայի խանութները, տները ամենայն օր գողերի ձեռքը չե՞ն. միթէ մեր քաղաքների փողոցների մէջն անգամ մարդիկ չե՞ն կողոպտւում և սպանւում։ Թողնենք մի կողմը ինչ որ ախտն ու մոլեգնութիւնը սպանում են, և այլն և այլն։ Հայաստանի ամենամեծ չարիքը իւր կարող որդւոց հեռու մնալն է և նորան աղքատ ու անպաշտպան ձգելը. պէտք է հողեր գնել, պէտք է տեղ տեղ փոքրիկ քանի հաստատել, որոնք գոնէ Հային պանդխտութեան դիմելուց ետ կը կանգնեցնէ, պէտք է օրէնսգէտներ և բժիշկներ

երթան այնտեղ. այս երկու դասուն էլ մեծ ասպարէզ կայ Հայաստանի մէջ, որոնցով կը պաշտպանուին գոյից և կենաց զոհերը: Հայաստանի մէջն է բուն ՀԱՅԿԱԿԱՆ խնդիրը, իսկ մենք Բերլինի մէջ ենք նորան որոնում. . . .

Տեղեկագիր և առաջարկութիւնք Տեսչին Ազգային Մեսրոպեան և Հռիփսիմեան Վարժարանաց Զմիւռնիոյ. 1878 Զմիւռնիա. երես 31.

Այս օրերս մեր ձեռքն ընկաւ Զմիւռնիոյ Մեսրոպեան և Հռիփսիմեան Հայոց ուսումնարանների Տեսուչ պ. Հ. Իփէքճեանի Տեղեկագիր և առաջարկութիւնքը, որի հետ կարճառօտ կերպով հարկաւոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին: Այն գաղափարը, որ մենք աչքի առաջ ենք ունեցել «Հայոց դպրոցների միութեան խնդիր» յօդուածի մէջ (Մանկավարժական Թերթ № 6), մենք աշխատելու ենք ըստ կարելոյն արծարծել հայ հասարակութեան մէջ ձեռքերնիս ունենալով այսպիսի հարուստ աղբիւրներ ինչպիսիք են սոյն Տեղեկագիր և Առաջարկութիւնքը, «Թորոս Աղբարը» և այլն և այլն: Մենք շատ անգամ կրկնել ենք և դարձեալ կրկնում ենք, որ Ռուսաստանցի և Տաճկաստանցի Հայերը փոխադարձաբար պէտք է ուսումնասիրեն միմեանց մտաւոր դրութիւնը միմեանցից օգուտ քաղելու և մի և նոյն ժամանակ մէկ մէկու օգուտ տալու համար: Մեզանից շատերին յայտնի չէ թէ արդեօք ինչ կազմակերպութիւն, ի՞նչ ծրագիր և ինչ կարգ ու կանոն են ընդունուած Տաճկաստանի Հայոց կանոնաւոր դպրոցներում, այն ինչ դոցա ծանօթութիւնը շատ և շատ հետաքրքիր է և կարևոր: Մեր ընթերցողները պարզ կարող են տեսնել այստեղ առաջ բերած Տեղեկագիր և Առաջարկութիւններից թէ Զմիւռնիոյ Մեսրոպեան և Հռիփսիմեան

ուսումնարանները ինչ սիստեմով և ինչ ծրագրով է առաջ գընում։

Տեղեկագիր Ա. Աստվածաշունչ գիրքը պարունակում է իւր մէջ նախ՝ տեղեկութիւնք Մեսրոպեան և Հռիփսիմեան վարժարանների արդի դրութեան վերայ (1878 թ.) առած նոցա նիւթական և ներքին վիճակովը և երկրորդ՝ Տեսչի այն առաջարկութիւնները, որոնց ընդունելով և կատարելով՝ կարելի է այդ վարժարանները այնուհետև աւելի լաւ վիճակի մէջ դնել։

1) Վարժարանների նիւթական վիճակը։ Տեղեկագրից երևում է, որ երկու վարժարանների շէնքերն էլ հին են և անյարմար իրրև վարժարան. կասկած կայ նաև թէ բաւական հաստատուն չըլլին։ Անյարմար են նոյնպէս գրասեղանները և նստարանները, որոնք աշակերտաց հասակին յարմար չեն, որոնք կարող են վնասել գլխաւորապէս աչքերին, կուրծքերին և ողնաշարին։— Այս անյարմարութեանց առաջն առնելու համար դպրոցների պ. Տեսուչը ըստ կարելւոյն կարողացել է մի քանի առողջապահական միջոցներ գործ դնել առ ժամանակ, մինչև դոցա հիմնովին փոփոխութիւնը։ Այդ ուսումնարանների ճեմիշները (արտաքնոցները) նոյնպէս անյարմար են շինուած, որով մեծ վնաս են պատճառում աշակերտաց առողջութեանը։ Դոցա մաքրութեան համար ևս առանձին հոգս է տարած ջուր դեղ և այլ միջոցներ գործ դնելով։ Զրպէտք է մոռանալ, որ դպրոցներին մոտ է և գերեզմանատունը, որը նոյնպէս վնասակար է երեխանց համար, 'ի նկատի ունենալով և այն, որ երեխանց զբօսնելու համար յաճախ տանում են այնտեղ մանգալու։

2) Վարժարանների ներքին վիճակը։ Տեղեկագրի այս բաժնի մէջ գրած են նախ՝ շաբաթական յուսամանց Մեսրոպեան և Հռիփսիմեան Վարժարանաց։ Մեսրոպեան վարժարանի ցուցակից երևում է, որ այդ վարժարանը բաժանուած է հետևեալ կերպով. առաջին կամ ստորին կարգը առնում է Ծաղկոց, երկրորդ կարգը— Նախակրթարան, երրորդը— Պատրաստարան և չորրորդը— Ուսումնարան։ Ծաղկոցի մէջ ուսանում են փոքրերը (73 աշակերտ) երեք բաժանմունքով մէկ դասարանի մէջ յանձնուած

մէկ ուսուցչի, բացի գեղագրութեան դասից։ Ուսմունք. կարդալ, գրել, թուագիտութիւն և աղօթք։ Ծաղկոցից բարձր գալիս է Նախակրթարան ասուած դասարանը, որ բաժանուած է նոյնպէս երեք կարգի և յանձնուած մէկ վարժապետի (88 աշակերտ)։ Ուսմունքն են՝ Հայերէն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Քրիստոնէական, Գաղղիերէն և Գիր։ Գաղղիերէն և Աշխարհագրութիւն միմիայն երրորդ կարգին են աւանդւում։ Նոյն առարկաները շարունակւում են և Պարբերական։ Իսկ Ուսումնարանում (չորս կարգի է բաժանուած) աւանդւում են հետևեալ գիտութիւնները՝ Կրօնագիտութիւն, Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Տաճկերէն, Յունարէն, Ընդհանուր և Ազգային պատմութիւն, Աշխարհագրութիւն բնակ. քաղաք. ուսումն. և առևտրական, Թուաբանութիւն, Տոմարակալութիւն, Բնագիտութիւն, Տարրաբանութիւն, Բնական պատմութիւն, Պատմութիւն փիլիսոփայութեան, քաղաքական տնտեսութիւն և գրհաշիւ։ Նոյն կարգն ևս ընդունուած է և Հռիփսիմեան վարժարանում, ուր աւանդւում են հետևեալ ուսմունքը՝ Կրօնագիտութիւն, Հայերէն, Ֆրանսերէն, Ազգային պատմութիւն, Աշխարհագրութիւն, Ընդհանուր պատմութիւն, Թուաբանութիւն, Տնտեսութիւն և Գեղագրութիւն։ Հռիփսիմեան վարժարանը բաժնուած է՝ Ծաղկոցի, Նախակրթարանի և Ուսումնարանի։ Ծաղկոցի և Նախակրթարանի աշակերտուհիք շաբաթը 4—5 ժամ Ձեռագործ ունին։

Պ. Տեսուչը իւր Տեղեկագրի մէջ գանգատւում է ծնողաց վերայ, սոցա անհոգութեան մասին, որ կանոնաւոր կերպով իւրեանց զաւակները չեն ուղարկում դպրոց, որով արգելք են լինում ուսման կանոնաւոր ընթացքին։

Ուշադրութիւն դարձնելով երկու վարժարանների Ծաղկոցների ժամանակացոյցին, մենք տեսնում ենք հետևեալը. Առաւօտեան 7 ժամ և 30 րոպէին աշակերտները հաւաքւում են. այդ ժամանակից սկսած մինչև 8 ժամը նշանակուած է Հաւատամ և անուանակոչութիւն աշակերտաց։ 8— 8, 30 միջոցին որոշուած է Մաքրութիւն և պղտոյց տնութիւն. Բշ. Դշ. Ուր. ուշադրութիւն, շուրութիւն և կարգաւորութիւն դիւնութիւն, իսկ Դշ. Եշ. Շբ. Աղօթ

և Սրբազան պատմութիւն։ 8,30—9. 9,10—10. 10,10—11. և 11,10—12 ուսմունք (կարդալ, գրել, հաշիւ, կրթութիւնք (իրագիտութիւն և այլն)։ 12-ին արձակում են, ժամ ու կէսից յետոյ (ճաշից յետոյ) երեխայք դարձեալ հաւաքւում են։ 1, 20—2-ը դարձեալ հաւաքում, անուանակոչութիւն, մաքրութեան և զգրոցաց քննութիւն և կարգաւորութեան կրթութիւնք։ 2—2,50 և 3—4 դարձեալ ուսմունք, 4—5 երգ և զբօսանք։ Նոյն ժամանակացոյցի կարգը ընդունուած է և նախակրթարանի մէջ։

Տեղեկագրից մենք տեսնում ենք, որ փոքր դասատան աշակերտները և աշակերտուհիները աւելի յառաջադիմութիւն են ցոյց տուել, տան թէ մեծերը, չընայելով որ վերջիններիս վերայ աւելի հոգս է տարած։ Այս բանին գլխաւոր պատճառներն են, ինչպէս յայտնում է Տեսուչը,

Ա. Ուսմանց ծրագրի անորոշութիւնը։ Ամեն մէկ դասարան ուսմանց մի որոշ սահման չէ ունեցել։

Բ. Ուսուցման եղանակների թերութիւնները.

Գ. Տեսուչը գանգատւում է, որ վարժապետները ընդհանրապէս, քիչ բացառութեամբ, ամբողջ դասարանը մէկանց չէին զբաղեցնում, այլ իւրաքանչիւր աշակերտի հետ զատ զատ էին զբաղւում, այնպէս որ մէկի հետ պարապելիս միւս աշակերտները անգործ էին մնում այդ միջոցին և բնականապէս անկարգութիւն անում, դասը խանգարում և այլն։ Ինչքան աշխատել է սորա առաջն առնելու ուսուցչական ժողովներ կազմելով և ուսուցիչներին այս բանը հասկացնելով, այնուամենայնիւ մեծ մասամբ չէ յաջողել այդ ամենը, որովհետև վարժապետաց մէջ պակասում է մանկավարժական գիտութիւնը։

Դ. Աշակերտաց դասագիրք չունենալը.

Աշակերտներից շատերը դասագիրք չունին և ստիպուած են լինում ուսուցչի դասատետրից օրինակել, որով իւրեանց դասի մեծ մասը օրինակի տալու վերայ ի զուր անցկենում։

Դ. Դասերի սրբագրութեան եղանակը.

Ուսուցիչները, ինչպէս երևում է Տեղեկագրից, առանց բացառութեան դասարանի մէջ են տետրակների սրբագրութեամբ պարապել։

Ե. Աշակերտաց, նա մանաւանդ աշակերտուհեաց յաճախակի բացակայութիւնները.

Այս երեւոյթիս վնասակար հետեւանքները ամենիս յայտնի են։

Նիւթական վիճակ վարժապետաց։

Վարժապետների բաւարար վարձատրութեան մասին շատ գեղեցիկ նկատողութիւններ է անում պ. Իփէքճեանը, որի հետ մենք ըստ ամենայնի համաձայն ենք։ Նա պահանջում է, որ վարժապետը փոքր ի շատէ ապահով վիճակի մէջ լինի, որպէս զի նա փափագ զգայ աշխատելու. և նուիրելու իւրեան գործին։ Ուրիշ ազգերի մէջ վարժապետները ոչ միայն բաւական հանգիստ և մարդավայել ապրուստ ունին, հապա և ապագայն ևս ապահովուած է թոշակ ստանալով տէրութիւնից։ «Մինչև որ մեր մէջ ալ վարժապետութիւնը ըստ արժանւոյն չըվարձատրուի, ասում է պ. Տեսուչը, ընդունակ մարդիկ վարժապետութեան ասպարէզը չեն մտներ, և արդէն մտածներն ալ հետ զհետէ կը հեռանայ։ Ոչ միայն արդարութիւնը, այլ նոյն իսկ խելացի տնտեսագիտութիւն պահանջում է, որ վարժապետների վիճակը բարւոքէինք։ Աշխատաւորները արդարութեամբ վարձատրելը ամենից խելացի և ամենից արդի-նուաստ խնայողութիւն է։

Պ. Տեսուչը մի քանի տեղեկութիւններ տալով Մեսրոպեան և Հռիփսիմեան ուսումնարանաց հարցաքննութիւնների մասին, անցնում է ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ։

Շատ իրաւացի ակնարկում է, որ մեր ուսումնարանների մէջ ամեն բան դեռ խառնաշփոթ և անպատրաստ վիճակի մէջ է և չըկայ մի ձեռնհաս պաշտօնական մարմին, որը կարողանար նոցա ընդհանուր ուղղութիւն տալ, դպրոցների տեսակները ու աստիճանները որոշէ, իւրաքանչիւր տեսակին նպատակը սահմանէ և այդ նպատակին հասնելու համար պատշաճ միջոցներ ցոյց տայ։ Մեր մէջ Ազգային դպրոցի մի Տեսուչ այս ամենը ինքը պէտք է անէ, եթէ կամենում է որ իւրեան յանձնուած վարժարանը արդի պահանջմանց համաձայն վիճակի մէջ դնել։

Սորանից յետոյ պ. Իփէքճեանը նկարագրում է Զուիցե-

բիայի վարժարանների տեսակները սկսած Մանկանց Պարտէզներից մինչև Գիմնազիաները և Համալսարանները։ Այնուհետև նա առաջարկում է հետևեալ կազմակերպութիւն դպրոցաց.

Սկզբնական վարժարան, իբրև առաջին աստիճանի դպրոց, պէտք է ծառայէ 7-ից մինչև 12—13 տարեկան տղայոց կրթութեանը, և պէտք է ունենայ 6 տարուան շրջան 7 դասարանի բաժանուած, 2 ստորին դասարանները վեցամեայ միւս 5-ը միամեայ շրջանով։ Իւրաքանչիւր դասարանի աշակերտաց թիւը պէտք չէ 30-ից աւելի լինի։

Սկզբնական վարժարանի ուսման ծրագիրը։ Սկզբնական վարժարանի մէջ պէտք է աւանդուին՝ 1. Կրօնք, Ս. գրոց պատմութիւն, բարոյական հրահանգ (1—6 տարի), 2. Հայերէն աշխարհիկ լեզու (1—6 տարի), Գրոց լեզու (6 տարի), 3. Իրագիտութիւն (1—3 տարի), 4. Թուաբանութիւն (1—6 տարի), 5. Երկրաչափութիւն (4—6 տարի), 6. Տոմարակալութիւն (5—6 տարի), 7. Աշխարհագրութիւն (4—6 տ.) 8. Բնական գիտութիւն (4—6 տ.), 9. Պատմութիւն Ազգային (4—6 տ.), 10. Պատմութիւն Ընդհանուր (6 տարի), 11. Ֆրանսերէն (4—6 տ.), 12. Տաձկերէն (5—6 տ.) միայն տղայոց, 13. Տնտեսութիւն (5—6 տ.) միայն աղջկանց, 14. Ձեռագործ (1—6 տ.) միայն աղջկանց, 15. Գծագրութիւն (1—6 տ.), 16. Գեղագրութիւն (1—5 տ.), 17. Մարմնամարզութիւն (1—6 տ.) Ձայնական երաժշտութիւն աշխարհային (աղջկանց և տղայոց 1—6 տ.) և եկեղեցական (միայն տղայոց 4—6 տ.)։

Միջին վարժարան. Մեսրոպեան ուսումնարանի այժմեան 2 բարձրագոյն կարգերը, ինչպէս և Հռիփսիմեան ուսումնարանի մէկ բարձրագոյն կարգը պէտք է միջին վարժարանի կարգերի տեղ ընդունուին։

Միջին վարժարանի ուսման ծրագիրը. Միջին վարժարանը պէտք է յատկանայ 13-ից մինչև 15—16 տարեկան տղայոց կրթութեանը և պէտք է ունենայ 3 տարուան շրջան 3 դասարանի բաժանուած, որոց պէտք է աւանդուին։

1. Կրօնագիտութիւն և Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւն։

2. Հայերէն աշխարհիկ և գրոց լեզու. գրագիտութիւն հանդերձ լեզուաբանական, պատմաբանական և կենսագրական ծանօթութեամբք։

3. Ֆրանսերէն, Անգլիերէն, Տաճկերէն, Յունարէն լեզուք, միայն երկուքը պարտաւորիչ։

4. Ազգային պատմութիւն։

5. Ընդհանուր պատմութիւն։

6. Աշխարհագրութիւն— բնական, քաղաքական, ուսումնական, առևտրական։

7. Թուաբանութիւն առևտրական։

8. Գրհաշիւ։

9. Տոմարակալութիւն։

10. Երկրաչափութիւն — մակարդակ. ի միջոցի և նկարագրական. Եռանկիւնաչափութիւն— գործնական տարազք։

11. Բնագիտութիւն և Մեքենագիտութիւն։

12. Տարրաբանութիւն.

13. Երկրաբանութիւն։

14. Բուսաբանութիւն.

15. Հանքաբանութիւն.

16. Կենդանաբանութիւն

17. Սկզբունք Իրաւագիտութեան— քաղաքային և առևտրական իրաւունք, Օսմանեան և Ազգային վարչութիւն։

18. Քաղաքական տնտեսութիւն։

19. Տնտեսութիւն (աղջկանց)։

20. Դաստիարակութիւն և առողջաբանութիւն (աղջկանց)։

21. Պատմութիւն Ճարտարական գիւտերու։

22. Գծագրութիւն— երկրաչափական և Ճարտարական դիմագծութիւն, զարդագծութիւն, գաշտանկար (վերջին երեքը գլխաւորապէս աղջկանց համար).

23. Ձայնական երաժշտութիւն.

24. Ձեռագործ (աղջկանց).

25. Մարմնամարզութիւն.

Ո—սմանց օժանդակ միջոցներ. Այդ վարժարանաց համար պէտք եղած օժանդակ միջոցներն են.

1. Հին և Նոր կտակարանի պատկերներ։

2. Իրագիտութեան դասերու համար Ֆրէօբէլի խաղեր, երկրաչափական պատկերներ և մարմիններ, բնական պատմութեան, արուեստից, ճարտարախօսութեանց, երկրագործութեան, գործիքներու, անօթներու և կարասեաց պատկերներու հաւաքածոյք, համարիչք թուարկութիւնը բացատրելու համար։

3. Չափական դրութիւնը բացատրող տախտակներ և չափերու ու կշիռներու տարազք։

4. Գծագրութեան համար անդրիք, երկրաչափական ձևեր, օրինակներ և տախտակներ։

5. Աշխարհացոյց տախտակներ բնական, ուսումնական և քաղաքական աշխարհագրութեան համար, և 2—3 երկրագունդ։

6. Պատմական ատլասներ։

7. Բնագիտութեան և ուսումնական աշխարհագրութեան վերաբերեալ գործիքներ։

8. Տարազք և պատկեր մեքենայից.

9. Բնական պատմութեան մեծ պատկերներու հաւաքածոյ։

10. Բնագիտութեան կարևոր գործիքներ և պատկերներ։

11. Տարրաբանութեան վերաբերեալ գործիք, անօթք և նիւթք.

12. Գլխաւոր բերքերու և վաճառաց և հաւաքածոյք.

13. Հանքաբանութեան, թուաբանութեան և կենդանաբանութեան հաւաքածոյք։

Սորանից յետոյ Տեղեկագրի մէջ խօսւում է դրամական միջոցի վերայ, որը մենք աւելորդ ենք համարում այստեղ բերել դորա աւելի տեղական նշանակութիւն ունենալու պատճառաւ։

Զմիւռնիոյ «Մեսրոպեան և Հռիփսիմեան» ուսումնարանները գտնւում են բարեկարգ դրութեան մէջ շնորհիւ պ. Իփէքճեանի, Տեսչին դոյն դպրոցաց։ Պ. Իփէքճեանը մեր մէջ կարող է համարուիլ հմուտ մանկավարժներից մէկը։ Մի քանի տարի Ռուսաստանի Հայոց դպրոցների մէջ կատարել է ուսուցչութեան պաշտօն, մի քանի տարի էլ Պոլսոյ օրիորդաց ուսումն

Նարանում և Նուբար—Շահնազարեանի դպրոցում տեսուչ է եղել, որտեղ մեծ եռանդ և գործունէութիւն է ցոյց տուել, այդ դպրոցները ծաղկեալ դրութեան հասցնելով։ Այնուհետև նա մի քանի ժամանակ եղել է Զուիցերիա և ուսել է մանկավարժութիւնը և ուսումնասիրել այդ տեղի դպրոցները։ Այժմ Զմիւռնիոյ դպրոցները դորա շնորհիւ հասել են ամենից ցանկալի դրութեան։

Զբպէտք է մոռանալ նոյնպէս, որ Զմիւռնիոյ մէջ մեր ազգայինք միաբանութեամբ և սիրով գործ են շինում առաջնորդութեամբ Մելքիսեդեկ Եպիսկոպոսի Մուրատեանցի, Զմիւռնիոյ գերապատիւ Առաջնորդի։ Պ. Իփէքճեանը բաղդաւոր է որ ծառայում է ուսումնարաններին այդպիսի ուսումնական, գործունեայ, եռանդոտ, անկեղծ և ճշմարիտ հայասէր Առաջնորդի ժամանակ ինչպիսի է գեր. Մելքիսեդեկ Եպիսկոպոսը։ Գործը մեծ ապագայ է խոստանում։

ՑԱԼ ԵՒ ՑԱԼՔ

ՆԱՄԱԿ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Կիլիկեան Ընկերութիւնս ստացաւ մեծապատիւ Յովհաննէս Աղա Պէյլիկճեանի ձեռամբ 43 անգղիական ոսկի 10 շիլին 8 բենս. որ Ռուսաստանի մէջ հաւաքուելով մեզ ղրկուած էր իբր նպաստ։ Ուստի պարտ անձին կը համարենք 'ի դիմաց Կիլիկեան Ընկերութեան մեր խորին շնորհակալիքն յայտնել հրապարակաւ թէ՛ այն ազնիւ անձին որ գլուխ կանգնելով հաւաքած է սոյն գումարը և թէ՛ այն ազգասէր անձանց որք յիշեալ գումարին հաւաքման մասնակից գտնուած են։ Կիլիկեան

Ընկերութիւնը ինք զինք բարեբաղդ կը համարի Ռուսիաբնակ Ազգայնոց համակրութիւնն գրաւած ըլլալուն և իւր գործերով ևս պիտի ջանայ այդ ընդհանուր համակրութեանն կրկին և կրկին արժանանալու։

Խնդրելով որ բարեհաճիք սոյն երկտողը Ձեր պատուական թերթի միջոցաւ հրատարակել 'ի գիտութիւն համայն Ազգայնոց։

Մնամք մեծաւ յարգանօք

Ատենադպիր — Ատենապետ

Տ. Առաքելեանց — Կիրակոս Յովհաննեան

ՆԱՄԱԿ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Խնդութեամբ կը ծանուցանենք թէ Կիլիկեան Ընկերութիւնը յաջողած է մի վարժարան բանալ Զէյթունի մէջ Կիլիկեան Վարժարան անուամբ որոյ տնօրէն դասատու կարգած է բնիկ Զէյթունցի և Շահնազարեան վարժարանի նախկին յառաջադէմ աշակերտներէն պ. Խաչատուր Տաղուրեան որև մեծ փորձառութիւն ստացած է իւր պաշտօնի մասին Ռոդոսթոյի և Մալկարայի մէջ վարած հնգամեայ դասատուութեամբը։ Գործադիր ժողովս սոյն բերկրառիթ լուրը Ձեզ հաղորդելով, կը խնդրէ Ձեր մեծապատուութենէ որ բարեհաճիք զայն Ձեր պատուական հանդիսի միջոցաւ հրատարակել 'ի գիտութիւն մեծարգոյ Ազգայնոց։

Մնամք մեծաւ յարգանօք

Ատենադպիր — Ատենապետ

Տ. Առաքելեանց — Կիրակոս Յովհաննեան

Կ. ՊՕԼՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիմանամք թէ Դպրոցասիրաց — Արևելեան ընկերութեան Տնօրէն խորհուրդն հրաւիրեր է Արարատեան և Կիլիկեան Գործադիր ժողովներն, որպէս զի դպրոցական մէթոտներու և դա-

սաղրքերու կարևոր խնդրոց վրայ 'ի միասին խորհրդակցելէ յետոյ, ընդհանուր ուսումնական հիմնադիր մ' ընդունին ընկերութեանց վարժարաններուն համար։

Ինչպէս կերևի ասիկա առաջին քայլ մ' է դէպ 'ի միօրինակ կրթութեան հաստատութիւն, որովհետև խիստ հաւանական է որ եթէ երեք ընկերութիւններն, որոց գլուխը կը գտնուին հմուտ ուսումնականք և դասատուք, իրենց դպրոցաց համար միօրինակ հիմնադիր մը հաստատել յաջողին, իրենց գործը կրնայ քաջալերական օրինակ մը լինել ազգային ուրիշ վարժարանաց համար. և միօրինակ կրթութեան հաստատութիւնն յայնժամ աւելի դիւրացած կը լինի։ Ասկէց զատ, կը կարծեմք թէ մի և նոյն դրութիւնն ընդունելով և հետևաբար մի և նոյն դասագրքերը գործածելով յիշեալ երեք ընկերութիւնք կրնան ինչ ինչ աւելորդ ծախքերէ ալ ազատ մնալ։ Երեք ընկերութեանց դպրոցներուն մէջ մի և նոյն եղանակաւ կրթութեան աւանդումն ուրիշ յայտնի առաւելութիւններ ալ ունենալով, կը յուսամք թէ Արարատեան և Կիլիկեան ընկերութիւնք ըջաբար 'ի նկատի կառնուն Դպրոցասիրաց Արևելեան ընկերութեան այս ազգօգուտ առաջարկութիւնն։

(Մասխ Թ. 2343)

«Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Տփխիսու «Մեղու Հայաստանի» և «Մանկավարժական Թերթ» ամսագրի բաժանորդագրութիւն մը բացուած է մայրաքաղաքիս մէջ։ Այս երկու թերթերն՝ որք իրենց ողջամիտ դատողութեամբն և բազմահարուստ տեղեկութեամբ մեր Կովկասեան եղբարց մտաւորական յառաջադիմութեան կատարեալ հայելի մը կ'ընծայեն, պիտի ունենան անշուշտ իրենց հետաքրքիր ընթերցողները Կոստանդնուպօլսոյ և գաւառաց մէջ։ Բաժանորդ գրուիլ ուզողք կրնան դիմել Կ. Պօլիս Պահէ—Քաբու գրավաճառ Պօղոս աղային խանութը, Ղալաթիա Թրամվայի ճամբան Քօմիսիոն խանի դիմաց և Արթին աղա Գասպարեանի պանդոկին տակ, թիւ 7, Սեղանաւոր Կիւլեան Յակոբ Էֆէնտիի քով։

Գաւառներէն բաժանորդ գրուիլ ուզողք պէտք է բաժա-

Նորդագինը նամակաւ միասեղ ուղղեն առ պ. Պարոյր, Ղալաթիա Մաքսատան դիմաց, Կէօչէ—Օղլու խան։

«Մանկավարժական Թերթիս տարեկան գինն է 6 ռուբլի։

(Մասիս)

Օգնական Թեմական Վերատեսչի Գանձակի Վիճակի Հայոց դպրոցների պ. Մ. Եպիսկոպոսեանցը*) իւր յայտարարութեամբ Թեմական Վերատեսչին զրում է հետևեալը Գանձակի տղայոց և օրիորդաց դպրոցների այս տարուայ հարցաքննութեանց առիթով.

«Հարցաքննութեան միջոցին աշակերտները գոհացուցիչ պատասխաններ էին տալիս Հայոց լեզուից, որոյ մասին պարաք համարեցի առանձնապէս յայտնել իմ խորին շնորհակալութիւնը ուսուցիչ պ. Բ. Շերմազանեանցին։ — Թուաբանութիւնից մեծ թերութիւն գտայ. և այդ բոլոր պակասութիւնները յառաջացած էին նորանից, որ նոյն առարկայի ուսուցիչները (օր. Խուբեանց և պ. Կարագուլեանց) ո՛չ այնքան դիտութեան պաշար ունին և ո՛չ էլ այնքան— հմտութիւն նոյն առարկային վերաբերեալ դասախօսութեան ընտիր ձևերին։— Կրօնի ուսուցիչը (Մկրտիչ քահանայ Տէր—Յովսէփեանց) սկսած 1875 ամի մինչև ցարդ անփոփոխ մի և նոյնը լինելով և համեմատելով անցեալների հետ՝ կրօնից ոչինչ տարբերութիւն չըկայ ո՛չ դասատուութեան ձևի և ո՛չ էլ յառաջադիմութեան մէջ։— Ձայնագրութեան ուսուցչին էս պարտ է շնորհակալութիւն մատուցանել միմիայն ձայնագրութեան համար։ Ձեռագործութիւնը անհամեմատաբար լաւ, որոյ մասին տիկին Հ. Շերմազանեանցը կ'վստահանամ ասել, արժան է առանձին ուշադրութեան և շնորհակալութեան, նա մանաւանդ, որ իւր համեստ վարվողութեամբը կարողացել է գրաւել ինչպէս աշակերտուհեաց, նոյնպէս և ծնողաց ուշադրութիւնը»։

---

*) Յաւօք սրտի պէտք է յայտնենք, որ պ. Մ. Եպիսկոպոսեանցը բոլորովին հրաժարական է տուել Օգնականի պաշտօնից. Գանձակի վիճակի դպրոցները դորանով շատ բան են կորցնում։ Փոխ ղեկուղ դպրոցի ուսուցիչ պ. Ա. Աբաբատեանը նոյնպէս հրաժարուել է պաշտօնից։ Սոցա մասին տե՛ս «Մանկ. Թերթ», № 6-ում։

Լսում ենք որ Գանձակի գպրոցայց հոգաբարձութիւնը մըտածում է երկրորդ դասատուն բանալու տղայոց դպրոցում։ Կը ցանկամք զորան կատարեալ յաջողութիւն։

* *
*

Արդէն պատրաստի էր տպագրութեան համար Վրաստանի և Իմերեթի հայոց ուսումնարանների մանրամասն հաշիւը ըստ նիւթականին և ուսումնականին 187⁷/₈ և 187⁸/₉ ուսումնական տարիների համար, բայց յօդուածի մեծ լինելու պատճառաւ անկարելի եղաւ այս գրքոյկիս մէջ տպելու, վասնորոյ յետաձգուեցաւ ամսագրիս երկրորդ շրջանի Սեպտեմբերի թուի մէջ լոյս ընծայելուն։

Նոյնը պէտք է ասենք և պ. Բահաթրեանցի «Գիտողական Ուսումն» յօդուածի վերաբերութեամբ, որը արդէն խմբագրութիւնս ստացել է, բայց մէկ գրքոյկի մէջ տեղաւորել անհնարին լինելու պատճառաւ նոյնպէս յետաձգուեցաւ տարւոյս Սեպտեմբերին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Բահաթրեանցի «ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ» ծախսւում է պ. Զ. Գրիգորեանցի դրավաճառանոցում հատը 25 կոպէկով, իսկ տասից աւելի առնողներին հատը 20 կ.

* *
*

Շուտով լոյս կըտեսնէ պ. Ա. Բահաթրեանցի «ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ»։ Մեր ուսումնարանների վարչութիւնների ուշադրութիւնը դարձնում ենք սորա վերայ։ Գնել ցանկացողները կարող են դիմել ուղղակի «Մանկավարժական Թերթի» խմբագրութեանը։

ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆ

«Մեղուի» յօդուածագիր «Մի ընթերցողին»։

Ձեր յօդուածը ընդունակ է միայն ծիծաղ շարժելու։—

Խմբագիր ՅԱԿՈԲ ՏԷՐ—ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

Дозволено цензурою. Тифлисъ. 14-го Іюля 1879 года.

Типографія Ивана Мартиросіанца

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

«Մանկավարժական Թերթը», իւր երկրորդ տարուայ շրջանում հրատարակւելու է նոյն ուղղութեամբ և ծրագրով, ինչպէս որ առաջին շրջանում հետևեալ պայմաններով.

1. Տարեկան կը լինի 10 գրքոյկ, իւրաքանչիւրը 6 թերթից (94 երես)։

2. Տարեկան գինն է ամենայն տեղ 6 ռ.։

3. Մինչև Սեպտեմբերի 10-ը բաժանորդագրինը վճարող բաժանորդը կըստանայ ձրի յունիս ամսի վերջին մի ընտիր հեղինակութիւն հայերէն լեզուով թարգմանութեամբ կամ ինքնուրոյն՝ ընթերցանութեան համար։

4. Եթէ բաժանորդաց թիւը հասնի մինչև 480-ի, այն ժամանակ խմբագրութիւնս իւր բաժանորդներին ձրի տալու է երկու գիրք։

5. Ուսուցիչները կարող են բաժանորդագրինը վճարել երկու նուագ. առաջին երեք ռուբլին յուլիսի սկզբին. միւս երեք ռուբլին նոյեմբերի մինչև 6-ն։ Վերջին նուագի բաժանորդագրինը ուշանալիս «Թերթը» չի ուղարկուի նոյեմբերի գրքոյկից սկսած մինչև դրամը ստանալը։

6. Որ և իցէ գրքոյկի չըստանալու մասին բա-

զոր հարկաւոր է ուղարկել ուղղակի խմբագրութեանս հետևեալ №-ը առանցքն պէտ։

Ռաժանորդ գրուել ցանկացողները կարող են դիմել խմբագրութեանս գրասենեակը, որ գտնուում է պ. Յ. Մոպտիրոսեանի տպարանում, Օրբելեան փողոցի վերայ, Ալէքսանդրեան պարտէզի մօտ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Въ контору Редакціи Армянскаго Журнала "Педагогическій Листокъ,,.

Խմբագիր ՅԱԿՈԲ ՏԷՐ—ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։